

Միքայել Մինասյան

# ՄԱՆԻՖԵՍՏ

Սփյուռք-Հայաստան ենթակառույցների  
համակցման տեսություն



Միքայել Մինասյան

# ՄԱՆԻՖԵՍՏ

Սփյուռք-Հայաստան ենթակառույցների  
համակցման տեսություն

Վերահրատարակություն՝ 2024թ.

Երևան

Հեղինակային հրատարակություն

2024

ՀՏԴ 316  
ԳՄԴ 60.5  
Մ 710

Հեղինակ՝ Միքայել Մինասյան  
Խմբագիր՝ Սեդա Վարդազարյան  
Գրքի ձեւավորումը՝ Ստեփան Բունույան

Մինասյան Միքայել  
Մ 710 Մանիֆեստ: Սփյուռք-Հայաստան ենթակառուցյցների համակցման  
տեսություն / Մ. Մինասյան.- Եր.: Հեղ. հրատ., 2024.- 116 էջ:

Սույն գիտական աշխատությունը հանդիսանում է Սփյուռք-Հայաստան-Արցախ կապերի հանրայնագիտության և հաղորդակցման գիտության տեսանկյուններից վերլուծության մի տեսություն: Այն առաջարկում է աշխարհասփյուռ հայության միասնության և փոխհամագործակցության կառուցցային տարբերակներ քաղաքականության, տնտեսության և կրթամշակութային ոլորտներում:

ՀՏԴ 316  
ԳՄԴ 60.5

ISBN 978-9939-0-4571-9

© Մինասյան Միքայել, 2024

© Copyright 2000-2024 - All Rights Reserved

Առաջին հրատարակությունը՝ ք. Բամբերգ, 2000թ.

Թարմացված է՝ ք. Բեռլին, 2023թ.

Վերահրատարկված է՝ ք. Երևան, 2024թ.

Տպագրված է «ՓոստՊրինտ» տպարանում, Ա/Ձ Խ.Հովհաննիսյան



Ո՛վ հայ ժողովուրդ,  
քո միակ փրկությունը  
քո հավաքական ուժի մեջ է:

Եղիշե Չարենց



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓԱԳԻՐ .....	9
ԱՌԱՋԱԲԱՆ.....	29
Ամբողջականության գաղափարն ու նշանակությունը .....	29
Ինտենցիա (հեռահար նպատակներ) և հայկական աշխարհի համաշխարհայնացման ժամանակի պահանջ .....	31
Սփյուռքի և ազգի տարածքային միավորի սահմանումները և վերջիններիս առանձնահատկությունները .....	35
Համակարգային մոդելների առաջարկ, ընտրություն և տեղայնացում հայկական աշխարհում .....	43
«Համահայկական Դաշինքը» որպես Հայաստան-Արցախ- Սփյուռք միացյալ ուժերը համակարգող համալիր տարբերակ ..	50
Կառուցվածքն ընդհանուր հայացքով (հորիզոնական).....	53
Կառուցվածքն ընդհանուր հայացքով (ուղղահայաց) .....	54
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ .....	55
Դաշնագիրը որպես նորմավորող ինստիտուտ Համահայկական Դաշինքի համար .....	55
Սփյուռքի և մայր համակարգի մեծությունների և նրանց հարաբերությունների սահմանում .....	60
Համահայկական Համագումարը որպես «Համահայկական Դաշինքի» ներկայացուցչական մարմին .....	62
Ընտրական մեխանիզմը «Համահայկական համագումարի» ընտրություններում.....	64
Համահայկական «Հանձնառույթը» որպես «Համահայկական Դաշինքի» գործադիր մարմին .....	66
Վարչա-քաղաքական կառույցի հորիզոնական սխեմա, վարչական կառույցի տեղակայման վայրը՝ ՀՀ.....	70
Վարչա-քաղաքական կառույցի ուղղահայաց սխեմա, վարչական կառույցի տեղակայման վայրը՝ ՀՀ.....	71

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	72
Ընդհանուր սոցիալ-տնտեսական բնութագիր .....	72
Տնտեսական և սոցիալական դրույթների սահմանում և իրագործում .....	74
Համահայկական կապիտալի ներգրավման մեխանիզմներ .....	77
Բազմաֆունկցիոնալ ՏՏ հարթակը՝ որպես տնտեսական գործիք և բյուջետավորման գրավական .....	80
Բյուջետային ծախսեր և եկամուտներ. հավասարակշիռ տնտեսվարման բանաձև .....	82
Տնտեսական հորիզոնական կառույց, վարչական կառույցի տեղակայման վայրը՝ ԱՄՆ.....	86
Տնտեսական ուղղահայաց կառույց, վարչական կառույցի տեղակայման վայրը՝ ԱՄՆ.....	87
ԿՐԹԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀՈԳԵԻՈՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ .....	88
Հայի ինքնության ձևավորման հենասյուները .....	88
Հայապահպանության առկա խնդիրները .....	89
Սփյուռքում գործող հայկական մեկօրյա կամ երկօրյա դպրոցների խնդիրների համեմատական վերլուծություն .....	92
Սփյուռքում ամենօրյա արհեստավարժ դպրոցների առկայությունը և հայոց լեզվի տարածումն ու դիվերսիֆիկացումն արտերկրում՝ որպես տևական լուծում ուժացման դեմ .....	100
Կրթամշակութային և հոգևոր հորիզոնական կառույց, վարչական կառույցի տեղակայման վայրը՝ արևմտաեվրոպական երկրներ .....	104
Կրթամշակութային և հոգևոր ուղղահայաց կառույց, վարչական կառույցի տեղակայման վայրը՝ արևմտաեվրոպական երկրներ .....	105
ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ .....	106
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ .....	107
ՄԻՔԱՅԵԼ ՄԻՆԱՍՅԱՆ .....	109

## Ուշադրություն

Սույն մանիֆեստի թեզիսները հանդիսանում են «Սփյուռք – Հայաստան - Արցախ ենթակառույցների համակցման տեսություն» գիտական ծավալուն աշխատանքի հակիրճ դրույթային ամփոփագրի թեզիսները:



# ԱՄՓՈՓԱԳԻՐ

## 1. Ամբողջականության գաղափարը և նրա ինտենցիան (հեռահար նպատակները)

1.1. Ամբողջականությունը որպես հավասարակշիռ համակարգերի ստեղծման գրավական

1.2. Հայաստան-Արցախ-Սփյուռք կառույցային միահյուսման գաղափարական հիմնավորումը

1.2.1. Հզորացնել Հայաստանի Հանրապետության տնտեսությունը և այն հասցնել գերզարգացած երկրների սոցիալ-տնտեսական մակարդակին

1.2.2. Սատարել սփյուռքի հայ ազգակիցներին համայնքների տնտեսական, մշակութային և քաղաքական գործունեությունը զորացնելու հարցում, որն էլ իր հերթին կնախադրի՝

ա) նպաստել հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչման և «հայկական հարցի» լուծման ընդհանուր խնդրին,

բ) այդ թվում նաև Արցախի կարգավիճակի հարցի լուծմանը,

գ) հոգալ ցեղասպանության սերունդների հայրենի հող վերադառնալուն,

դ) համաշխարհային հասարակությանը միջազգային ատյաններում՝ որպես բարոյական և նյութական փոխհատուցում, ճանաչել տալ նրանց տարածքային իրավունքներն ու պահանջները և, ինչու՞ ոչ,

ե) առավել հեռանկարային ծրագիր նախատեսել՝ Արևմտյան Հայաստանի հայաբնակեցումից հետո ինքնավարության պետական տարբերակ ստեղծելու, ապա պատմական Հայաստանների մասնատված տարածքների միացման շուրջ:

## **2. Հայկական աշխարհի համաշխարհայնացման անհրաժեշտությունը և նրա մեխանիզմները**

- 2.1. Ստեղծել փոխկապակցված և փոխկախյալ (ինտերդեպենդենտ) հարաբերություն ներքին և արտաքին, պարտադիր և կամավոր կապեր սփյուռքի, Հայաստանի Հանրապետության պետական կառույցի ու նրա մարզային ու համայնքային վարչական միավորների, ԼՂՀ-ի և տարբեր երկրների սփյուռքահայ համայնքների միջև, որն ազգային ծրագրերի իրագործման ճանապարհին ծառայելու է որպես կառույց և միջոց:
- 2.2. Համալիր կառույցի ստեղծման անհրաժեշտությունը, որն ինչպես կհամակարգեր սփյուռքահայության և ազգի տարածքային միավորների համագործակցական իշխանավարման նպատակաուղղվածությունն, այնպես էլ կկարողանար առկայումս գոյություն ունեցող սոցիալական, քաղաքական և ազգային խնդիրների հարթեցումը խթանել մեկ այլ՝ առավել բարձր ու արդյունավետ հարթության վրա:
- 2.3. Սփյուռքի և ազգի տարածքային միավորի սահմանումները և վերջիններիս բաղադրիչները:

2.3.1. Գոյություն ունեցող միավորների ենթակառուցվածքների **կամավոր միահյուսման** համար պայմանի ստեղծում, դրանց օբյեկտիվ, իրավաբանական և կառուցվածքային ձևակերպում համահավասար հարթության վրա՝ հավասարազոր հարաբերությունների առկայությամբ:

2.3.2. Ըստ մայր համակարգերի վարչատարածքային առանձնահատկությունների՝ սփյուռքը բաժանվում է մայրցամաքների և երկրների բնութագրման, օր՝.

ամերիկահայ,

կանադահայ կամ

Եվրոպայի հայկական համայնքներ, այդ թվում՝ ռուսահայ,

ֆրանսահայ համայնք և այլն:

2.4. Համակարգային մոդելների առաջարկ, ընտրություն և տեղայնացում հայկական աշխարհում.

Ա. Վեց բաղադրիչներով հավասար հարթության վրա համակարգային մոդել:

Բ. Վեց բաղադրիչներով պատճառահետևանքային, գծային (կաուզալ) համակարգային մոդել:

2.4.1. Վեց բաղադրիչներով հավասար հարթության վրա համակարգային մոդելի նախապատվություն և տեղայնացում հայկական աշխարհում հետևյալ բաժանարարներով.

1) Հայաստանի Հանրապետություն (մարզեր,

համայնքներ)

- 2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (շրջաններ)
- 3) Ամերիկահայ համայնքներ (մայրցամաքային երկրների համայնքներ)
- 4) Եվրոպայի հայ համայնքներ (եվրոպական երկրների համայնքներ)
- 5) Մերձավոր Արևելքի հայ համայնքներ (երկրների համայնքներ)
- 6) Եվ այլ աշխարհամասերի և տարածաշրջանների հայկական համայնքներ:

2.4.2 Հայերի ներքին զգայական կապը որպես համա- և փոխզործակցության խթան

2.4.3 Հարաբերության դրսևորման ժամանակ «Տալու և վերցնելու» միջև հավասարակշռության և փաստական օբյեկտիվության պահպանում

2.4.4 Իշխանության միացյալ ուժերի տարբերակը որպես լուծում

### **3. Քաղաքական դրույթներ և կառույց**

3.1. Սփյուռքի և մայր համակարգի մեծությունների և նրանց հարաբերությունների սահմանում և վարչատարածքային բաժանումները.

- ՀՀ մարզային համայնքները,
- ԼՂՀ-ի շրջանային համայնքները,
- ՀՀ կուսակցությունները,
- ԼՂՀ կուսակցությունները,

- սփյուռքահայ կուսակցությունները,
- սփյուռքահայ միությունները,
- սփյուռքի բարեգործական,
- քաղաքական և մշակութային կազմակերպությունները,
- սփյուռքի գիտական ինստիտուտները և հաստատությունները,
- եկեղեցին իր նվիրապետական չորս աթոռներով՝
  - Ամենայն Հայոց Կաթողիկոսություն,
  - Կաթողիկոսություն Մեծ Ի Տանն Կիլիկիո,
  - Երուսաղեմի Հայոց Պատրիարքություն,
  - Կ. Պոլսի Հայոց Պատրիարքություն:

Վերոհիշյալ միավորների ամենափոքր միավորը ֆիզիկական անձն է, որը մի քանի միավորներում մասնակից-անդամ լինելու դեպքում իրավունք ունի ներկայացուցչական ձայնի իրավունքով համամասնական մեծամասնությամբ կառույցում ներկայացնել միայն մեկ համակարգային միավորի շահը: Այսպիսով հնարավոր կլինի խուսափել ներկայացուցչական ձայների թվի աղավաղումից:

3.2. Համահայկական Դաշինքը՝ որպես միջնորդ և որպես աշխարհասփյուռ հայերի միջև ՀՀ ու սփյուռքի շահերը նորմավորող, նրանց հարաբերությունները քաղաքական, տնտեսական և մշակութային գործընթացներում կանոնավորող ինստիտուցիա: «Այս պարագայում մեկ անգամ ևս զգացվում է **Համահայկական Դաշինքի՝ որպես միջնորդի և որպես**

**աշխարհասփյուռ հայերի միջև, ՀՀ-ի ու սփյուռքի շահերը նորմավորող, նրանց հարաբերությունները քաղաքական, տնտեսական և մշակութային գործընթացներում կանոնավորող ինստիտուցիոն դերի անհրաժեշտությունը»:**

- 3.3. Համահայկական համագումարը որպես Հայկական Դաշինքի ներկայացուցչական (օրենսդիր) բարձրագույն մարմին: **«Համահայկական Դաշինքի ներկայացուցչական մարմին է ծառայելու Համահայկական Համագումարը, որի դերն ու նշանակությունը կայանալու է վերոհիշյալ համակարգային միավորների շահերը և հետաքրքրությունները կոորդինացնելու, նրանց գործողությունների համաձայնեցումը Դաշնագրի միջոցով նորմավորելու, համաձայն վերջիններիս պահանջների և պարտականությունների՝ ծրագրային ընդհանուր որոշումներ և ուղեգծեր գտնելու և ընդունելու, ինչպես նաև դրանց կատարումը վերահսկելու մեջ: Դաշնագրի դրույթների առաջարկումը, ընդունումը և հնարավոր փոփոխությունների կատարման իրավունքը վերապահվում է միայն և միայն Համահայկական Համագումարին»:**

- 3.3.1 Ընտրական մեխանիզմը **«Համահայկական համագումարի»** ընտրություններում **Ժողովրդավարության սկզբունքներից ելնելով՝ «Համահայկական Դաշինք» կառույցի ներկայացուցչական մարմնի՝ Համահայկական Համագումարի, անդամներն ընտրվում են:** Վաղորոք Դաշնագրում սահմանվում են

ընտրակարգ և ընտրական իրավունք: Ընտրություններ կազմակերպելու նպատակով խոշոր կառույցներում (կենտրոնական խորհուրդներ, եկեղեցիների Առաջնորդարաններ, անդամաշատ կուսակցություններ, ՀՀ և ԱՀ համայնքներ) ստեղծվում են ընտրական հանձնաժողովները, որոնք էլ պատասխանատու են ընտրությունները կազմակերպելու և անցկացնելու համար: Ընտրաձայների համամասնությունը սահմանվում է 1:25.000-ի հարաբերությամբ կառույցների ներկայացուցչական ձայնի իրավունքով:

3.4. Համահայկական դաշնագիրը՝ որպես նորմավորող հաստատություն, հիմք և ուղեցույց Համահայկական դաշինքի և նրա ածանցյալ որոշումների (օրենքների) համար:

**«Այս պարագայում տեղին կլիներ Համահայկական Դաշինքի կառույցի համար թերևս որպես բազա ընդունել Դաշնագիրը, որը պետք է հիմք ծառայի Համահայկական Դաշինքի ածանցյալ պայմանագրերի, կանոնադրությունների և այլ իրավաբանական ձևակերպումների համար, որոնք իրենց հերթին ի զորու կլինեն տարբեր բնագավառներում կանոնակարգելու համակարգային միավորների միջև գործող հարաբերությունները»:**

3.5. ***Համահայկական Դաշինքի գործադիր մարմին է ծառայելու համահայկական «Հանձնառույթը», որը կոչված է լինելու կապարել համահայկական համագու-***

**մարի որոշումները, ինքնուրույն նախաձեռնությամբ նախանշելու, մշակելու և ի կատար ածելու քաղաքական, տնտեսական և կրթա-մշակութային ծրագրերի Դաշնագրում սահմանված դրույթների շրջանակներում, ընտրելու վերջիններիս իրագործման համար մարտավարություն, տալու և դառնալու ուղեցույց հաստատելու աշխարհում և ազգի տարածքային միավորում հրատարակ խնդիրների լուծման համար:**

«Համահայկական Հանձնառույթի» հանձնախմբերը՝ որպես Համահայկական դաշինքի գործադիր մարմին, ըստ ենթակառուցային հետևյալ միավորների բաշխված են.

Քաղաքական ենթակառույցը՝ ՀՀ-ում, Տնտեսական ենթակառույցը՝ ԱՄՆ-ում, Մշակութային ենթակառույցը՝ Եվրոպական երկրներում.

3.6. Գործադիր մարմնի ենթակառույցները բաժանվում են ծրագրերի իրագործման ոլորտային և բնագավառային հետևյալ խմբերի.

I. Հումանիտար գիտություն

- քաղաքագիտություն և հասարակագիտություն
- պատմություն, փիլիսոփայություն
- բանասիրություն
- գրավոր և բանավոր թարգմանություններ
- մանկավարժություն և հոգեբանություն
- լրագրություն և հրապարակախոսություն
- իրավագիտություն և իրավաբանություն
- աստվածաբանություն, միջեկեղեցական կապեր

## II. Տեխնիկա և բնագիտություն

- ինֆորմատիկա, SS
- մաթեմատիկա
- ֆիզիկա և աստրոֆիզիկա
- քիմիա
- կենսաբանություն
- բժշկագիտություն և ժողովրդական բժշկություն
- ճարտարագիտություն (ինժեներիա) և մեխանիկա

## III. Մշակույթ

- գրողներ և բանաստեղծներ
- երաժիշտներ
- պարարվեստ
- գեղարվեստ
- ֆոտոարվեստ և վավերագրություն
- ֆիլմ և բեմարվեստ (թատրոն)
- սպորտ

## IV. Կրթություն

- դպրոցներ
- վարժարաններ
- բարձրագույն հաստատություններ
- համալսարաններ
- գիտահետազոտական ինստիտուտներ
- մեկօրյա կամ երկօրյա դպրոցներ
- գիտությունների ակադեմիա

## V. Արդյունաբերություն, գյուղատնտեսություն, առևտուր և սպասարկում

- արդյունաբերություն
- գյուղատնտեսություն
- ֆինանսներ և բանկեր
- մեծածախ առևտուր
- մանրածախ առևտուր և փոքր ձեռնարկություններ
- արհեստագործություն և անհատ ձեռներեցներ
- հրատարակչություն և հրատարակչական գործ
- այլ սպասարկման ոլորտի ծառայություններ

#### VI. Ճարտարապետություն և շինարարություն

- ճարտարապետություն, շինարարական ինժեներիա
- շինարարական ձեռնարկություններ
- փոքր շին. ձեռնարկություններ և անհատ արհեստավորներ

## 4. Տնտեսական և սոցիալական դրույթներ

4.1. Ընդհանուր սոցիալ-տնտեսական բնութագիր

4.2. Տնտեսական և սոցիալական գործառույթներն են.

- ընդհանուր տնտեսական ապրանքների, դրամական շուկայի, աշխատանքային բորսայի, արժեթղթային բորսայի գործառույթների ստեղծումը և դրանց նորմավորումը մեկ ամբողջական Համահայկական Դաշինքի կառույցում՝ սրանից բխող ապրանք-դրամային շրջանառության ապահովումով,

- Համահայկական Դաշինքում դրամական արժույթի սահմանումը, այս համատեքստում Համահայկական բանկի ստեղծումն ու գործարկումը, Հայկական Դրամի ներգրավումը և դիվերսիֆիկացումը սկզբում այս կառույցի շրջանակում և ապա դրանից դուրս,
- ընդհանուր տնտեսական ազգային շուկայի ձևավորումը սփյուռքում և ազգի տարածքային միավորում, նրաց բաղադրիչների միջև փոխկապակցվածությունն ու վերջիններիս վերլուծությունը,
- ընդհանուր տնտեսական գործառույթների վերահսկողություն ու դրանց անվտանգության ապահովում:
- Համահայկական Դաշինքի դրամական ելքերի և մուտքերի սահմանումը, կրկնակի հարկահավաքության կամ դրամական պարբերական գանձումների միջազգային հնարավորությունների ստուգումը և թերևս վերջիններիս մեխանիզմների ստեղծումը՝ սրանից բխող Համահայկական Դաշինքի բյուջետավորմամբ և բյուջետային ծրագրերի սահմանումով ու իրագործումով,
- Համահայկական Դաշինքի կառույցում սոցիալական և առողջապահական ապահովագրության մեխանիզմների ներառումն ու կիրառումը,
- բարեգործական, մշակութային և գիտա-կրթական ոլորտի զարգացմանն ուղղված Համահայկական Դաշինքի հիմնադրամի ստեղծումը: Սփյուռքի և ազգային տարածքային միավորի տվյալ պետա-իրավական մայր համակարգերի հանրային միջոցնե-

րից դրամական օժանդակ միջոցների ներգրավումը՝ ընդունված տարաբնույթ ծրագրերի իրագործման համար:

**Վերոնշյալ գործառույթների իրականացման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, թե որ իրավատնտեսական մայր համակարգում և ինչ գնողունակության շուկայում են դրանք կիրառվելու՝ դրանից բխող հետևություններով:**

#### 4.3. Լուծումներ

1. միջազգային տնտեսական փոխգործակցության օրենքներին հարիր համապատասխան գործիքակազմով միկրոտնտեսական մեխանիզմների ստեղծում և գործարկում՝ օգտագործելով արդի ինտերակտիվ տեխնոլոգիաները,
2. այս մեխանիզմների կիրառումը Համահայկական Դաշինքի տնտեսական և քաղաքական նպատակների իրագործման համար՝ նպաստավոր դաշտ ստեղծելով մակրոտնտեսական գործառույթների ներածմանը, դրանց արժևորմանն ու հեռանկարային զարգացմանը, որին հիմք կկազմի տնտեսական վերը թվարկված գործիքակազմը,
3. տարբեր պետա-իրավական մայր համակարգերում ընդգրկված սփյուռքյան միավորներում վերոնշյալ գործառույթները սկսելու, կորոդինացնելու և ղեկավարելու ուղղությամբ Համահայկական Դաշինքի վարչա-տնտեսական մասնաճյուղերի տեղերում ստեղծում և ձևավորում՝ վերջիններիս կանոնադ-

րական կարգը բխեցնելով ազգային և միջազգային օրենսդրությունից և Համահայկական Դաշնագրի սկզբունքներից:

#### 4.4. Համահայկական կապիտալի ներգրավման մեխանիզմներ

4.4.1. Սփյուռքի և ազգի տարածքային միավորներում մտավորականների, կրթության, գիտության, մշակույթի և գործարարների մտավոր ու նյութական ներուժի համախմբման և կոորդինացման նպատակով առաջարկվում է գործարկել համացանցային ինտերակտիվ բազմաֆունկցիոնալ մեկ հարթակ, որը լինելու է մասնագիտական հետաքրքրությունների համընկեցման կենտրոն և ծառայելու է վերջիններիս միջև համահավասար հարթության վրա հաղորդակցման կապերի ստեղծմանը և ամրապնդմանը:

4.4.2. Ի թիվս մնացյալի՝ SS հարթակի խնդիրները կարող են լինել.

- համապատասխան բազմաֆունկցիոնալ ինտերակտիվ հարթակի միջոցով միջնորդավորել և կոորդինացնել բազմաբնույթ հասարակական, քաղաքական, տնտեսական, կրթական, գիտական, հոգևոր, բնապահպանական և մշակութային ծրագրեր,
- որոնել հնարավոր պետական և հասարակական ֆինանսավորման աղբյուրներ, որոնք կնպաստեն վերոնշյալ ծրագրերի

իրականացմանը և վերջիններս դասակարգմանն ըստ ծրագրային անհրաժեշտության և դրանց իրագործման հավանականության,

- հաստատել կապ հովանավոր կազմակերպությունների, բարերարների, պետական մարմինների և հիմնադրամների հետ՝ պարզելու վերջիններիս կողմից ծրագրերի իրագործման նպատակով ֆինանսներ տրամադրելու հնարավորությունների, չափերի և ժամկետների մասին,
- Մշակել սեփական բիզնեսի, հասարակական, քաղաքական տնտեսական, կրթական, գիտական և մշակութային ծրագրեր և/կամ մրցույթային կարգով ուղղորդել դրանք հայ միություններին, կազմակերպություններին, ՀՀ և ԼՂՀ վարչական մարմիններին, գործարարներին, ընկերություններին և այլն:

#### 4.4.3 Համացանցային հարթակի գործիքակազմը.

- Ֆիզիկական և իրավաբանական անձանց, պետական և հանրային մարմինների տվյալների շտեմարան, որոնք էլ տալիս են իրենց համաձայնությունը անդամակցելու կառույցին և վճարելու սահմանված Համահայկական Դաշինքի տուրքը / անդամավճարը,
- տեսալսողական և գրավոր քննարկումներ ծավալելու սոցիալական հարթակ,
- տարաբնույթ ծրագրեր կազմելու համապատասխան գործիքներ,

- աշխատատեղերի/ուսման/պրակտիկայի որոնման և առաջարկի բորսա՝ համապատասխան որոնողական և հայտագրման գործիքակազմով:

**Սույն հարթակը կրում է միջնորդավորող բնույթ և համացանցման օգնությամբ բազմատեղ կցավարդակի դեր է կատարելու հայկական աշխարհում: Այն գտնվելու է Համահայկական Դաշինքի գործադիր ենթակառուցյի գործարկման, կառավարման և վերահսկողության ներքո: (Տե՛ս նմանատիպ հարթակի մեկ օրինակ հետևյալ հղումում. [www.european-armenian-experts.eu](http://www.european-armenian-experts.eu) )**

4.4.4. Բյուջետային ծախսեր և եկամուտներ. հավասարակշիռ տնտեսվարման բանաձև

## **ԵԿԱՄՈՒՏՆԵՐ**

- Ծրագրերի միջնորդավորումից, գովազդից, անդամավճարներից / տուրքերից մուտքագրված հասույթով ձևավորվում է Համահայկական Դաշինքի բյուջեն:
- Համահայկական Դաշինքի բյուջետային եկամուտները կարող են ավելանալ Դաշինքի կողմից Համահայկական բանկի հիմնադրման և գործարկման արդյունքում և միջազգային բորսաներում սեփական արժեթղթերի դիվերսիֆիկացման օգնությամբ:
- Հիմնելով և գործարկելով համահայկական սոցիալական և առողջապահական ապահովագրություն՝ ստեղծվում է սոցիալական արդար հարաբերություններ:

րի համար բազա՝ մուտքագրելով ապահովագրական տուրքերի գումարները:

- Համահայկական Դաշինքի կողմից ընդունված, մշակված և իրականացված սեփական տարաբնույթ ծրագրերից ստացված շահույթ:
- Արտաբյուջետային կարգով Համահայկական Դաշինք կառույցի հիմնադրամին բարեգործական և հոգևոր-եկեղեցական նպատակներով կարող են ապահովել հասույթներով նաև անհատ բարերարների նվիրատվությունները և սփյուռքյան մայր համակարգերի կամ ազգի տարածքային միավորների կողմից տրամադրվող հանրային միջոցները, որոնք բնականաբար կունենան վերոնշյալ ոլորտներում կոնկրետ ծրագրերի կատարման ուղղորդվածություն:

## ԾԱԽՍԵՐ

Ծախսերն իրենց հերթին բաժանվում են միանվագ և պարբերական ծախսերի: Միանվագ ծախսերի մեջ են մտնում.

- Համահայկական Դաշինք կառույցի հիմնադրման կապիտալ ծախսերը,
- Կապիտալ ներդրումային ծախսերը,
- Քաղաքական, արդյունաբերական, գյուղատնտեսական, առևտրային, մշակութային, գիտական, կրթական, բնապահպանական, հանրային և հոգևոր ծրագրերի համար պահանջվող ներդրումային ծախսերը ՀՀ-ում, ԼՂՀ-ում և սփյուռքյան գաղթօջախներում,
- Անշարժ և շարժական գույքի ձեռքբերման ծախսերը:

Պարբերական ծախսերի թվին են պատկանում.

- վարչարարական ծախսերը,
- SS խնամքի և մարքեթինգի ծախսերը,
- վարձակալական և կոմունալ ծախսերը,
- ապահովագրական ծախսերը,
- աշխատավարձերի և հոնորարների համար պահանջ-վող ծախսերը,
- մայր համակարգերում հարկերի և սոցիալական տուր-քերի համար պահանջվող պարտադիր ծախսերը,
- մասնագիտական միություններին թերևս նաև արհմի-ութենական կոմիտեներին պարտադիր անդամակցու-թյան վճարները
- Այլ չնախատեսված տվյալ մայր համակարգում պա-հանջվող ծախսերը

4.4.5. Գույքային ծախսերի համապատասխանեցու-մը ժողովրդական եկամուտին, այսինքն՝ մեր դեպքում համահայկական եկամուտին: Այս բա-նաձևն ունի սույն տեսքը.

$$Y^s = Y;$$

$$Y^s = Y^d;$$

$$Y^d = C + I;$$

$$C = C_0 + c q Y \quad (0 < c < 1);$$

$$I = I_0;$$

$Y^s$  = պլանային ապրանքների առաջարկ;  $Y^d$  = պլանային ընդհանուր պահանջարկ;  $Y$  = ռեալիզացված ապրանքների

արտադրություն (համախառն տնտեսական արդյունք);  $C$  = սպառողական ապրանքների պահանջարկ;  $C_0$  = ավտոնոմ սպառում;  $c$  = մարզինալ սպառման քանակը;  $I_0$  = ավտոնոմ ինվեստիցիա. Գրաֆիկորեն հավասարակշիռ եկամուտը ստանում է հետևյալ բանաձևը.  $Y^G = 1 / (1 - c) q (C_0 + I_0)$

## 5. Կրթական, գիտական, մշակութային և հոգևոր դրույթներ

### 5.1. Հայի ինքնության ձևավորման հենքերը

- Հայոց լեզու և գրականություն
- Քրիստոնեական հավատք
- Պատմական հիշողություն
- Հայ մշակույթ

### 5.2. Հայապահպանման և հայազարգացման առկա խնդիրներն ու ծրագրերը

- Սփյուռքում մեկօրյա կամ երկօրյա դպրոցների խնդիրները և դրանց լուծման առաջարկները
  - Կազմակերպչական բնույթի
  - Բարոյա-հոգեբանական բնույթի
  - Նյութատեխնիկական բնույթի
- Լուծման տարբերակների թվարկում և սահմանումներ

### 5.3. Սյուռքում ամենօրյա արհեստավարժ դպրոցների առկայությունը և հայոց լեզվի տարածումն ու դիվերսիֆիկացումն արտերկրում որպես տնական լուծում ուժացման դեմ

- 5.4. Հայագիտության զարգացման արդի խնդիրները և վերջինիս ուղղակի կապը բնագիտության և տեխնիկայի հետ
- 5.4. Արտերկրում հայ մշակույթի պահպանման և տարածման վերլուծական առաջարկներ

© Copyright 2010-2020 - All Rights Reserved

**ՎԵՐՋ**



# ԱՌԱՋԱԲԱՆ

## Ամբողջականության գաղափարն ու նշանակությունը

Ամբողջականությունն է ստեղծում միասնական ուժ: Ամբողջականությունը, սակայն ոչ ամբողջատիրությունը, քանի որ վերջինիս կառուցվածքային և գաղափարական մեթոդներն ու մեթոդոլոգիան խորհրդային միության անկումից հետո կորցրեցին իրենց տնտեսական գերապատվության խաղաքարտն ամբողջ ճակատով, իսկ քաղաքականը՝ մասամբ՝ հաշվի առնելով երկրագնդի ներկայիս ամբողջատիրական քաղաքականություն վարող պետությունների առկայությունը: Չնայած այս հանգամանքի՝ չի կարելի նկատի չառնել նաև համակարգերի ներքին և արտաքին ապակենտրոնացման և մասնատման այսօրվա բացարձակ զանգվածային միտումը մանավանդ Խորհրդային Նախկին երկրներում: Սա հանգեցնում է ոչ միայն իշխանությունների քաղաքականության և տնտեսավարման որոշակի անկառավարելիության, այլև քանդում մինչ այդ կառուցված կոմունիկացիոն միջոցների մեծ մասը: Այսպիսով, մեկ ծայրահեղությունից մյուսն ընկրկելով, հետևանքը հաճախ լինում է համակարգային՝ ներքին և տարբեր համակարգային միավորների միջև հավասարակշռության խախտումը: Վերջինս էլ իր հերթին արտացոլվում է քաղաքացիական պատերազմների, ազգամիջյան բախումների և այլ նման պայթյունալից իրավիճակների մեջ: Սրանից կարելի է եզրակացնել, որ ամբողջականությունն է այն ոսկյա

միջինը, որի վրա կարելի է կառուցել հավասարակշիռ համակարգեր:

Հայոց պատմության քառուղիներից կարելի է բերել այս կապակցությամբ բազմաթիվ օրինակներ վերոհիշյալ պնդումը հաստատելու համար: Այս առիթով բավական է հիշատակել արցախյան շարժման և ազատամարտի հաղթանակի մեջ Հայաստանի և սփյուռքի միասնական ուժի դերը, և մենք կհամոզվենք միասնության կարևորության մեջ, բայց հետևյալ մանիֆեստում շեշտադրումն ուղղված է լինելու այլ նպատակակետի. ասել կուզի, թե արդյո՞ք ամբողջականության իրականացումը հայկական աշխարհում այսօր իրական հիմքեր ունի, թե՞ պատրանք է, միայն բաղձանք, որի նախագիծն ու կառուցումն ի վերուստ դատապարտված է ձախողման՝ կողմնակի և ներքին ուժերի միջամտությամբ:

Մեկ այլ խնդիր է նաև այս գաղափարի իրագործմանն ուղղված միջոցների կիրառումը. ինչպիսի քաղաքական, տնտեսական և մշակութային մեթոդներով և ինչ լծակներով կարելի է հասնել այս գաղափարի իրականացման ցանկալի արդյունքին: Ելնելով Հայաստան-սփյուռք տարերային, անկանոն և շատ դեպքերում միակողմանի այսօրվա զարգացումից՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ հայկական խնդիրների բարդույթի լուծման ճանապարհին աշխարհասփյուռ համահայկական ուժի արդյունավետ օգտագործումից մենք դեռ բավականին հեռու ենք: Դա, մեծ մասամբ, ինչպես թույլ կազմակերպվածության, այնպես էլ առաջարկվող տարբերակների փոխզիջումայնության բացակայության արդյունք է: Ուզում եմ կրկնել, կազմակերպ-

վածության և ոչ թե գաղափարական վասկումի արգասիք, ինչն այսօր շատերն են սխալմամբ կարծում և, հետևաբար, փորձում ազգային մեկ ընդհանուր գաղափարախոսություն մշակել, որի շուրջ, ըստ նրանց կարծիքի, կհամախմբվեր համայն հայությունը: Մի՞թե այս գաղափարն ինքը ներքուստ զավեշտալի չի, քանզի

1. գաղափարախոսությունն առաջ է գալիս իրավիճակների օբյեկտիվ զարգացումից՝ հենվելով նրանցում գործող սուբյեկտների գեներալին, սոցիոմշակութային, պատմական և նպատակային հատկանիշների վրա:
2. Այսինքն, գաղափարախոսությունն ինքը հասարակության դինամիկ զարգացման արդյունք է, հետևանք, որը չի կարող կտրված լինել ոչ միայն առկա իրողությունից, այլև սուբյեկտների պատմական անցյալից:
3. Նրա հասունացումը ժամանակի ընթացքում վերջ ի վերջո արտացոլվում և ապացուցվում է հասարակական տեղաշարժերի մեջ, որի գործունեության հիմքում ընկած է մի որոշակի հասարակական-պետական կառույց որևէ մի ֆորմացիայում:

## **Ինտենցիա (հեռահար նպատակներ) և հայկական աշխարհի համաշխարհայնացման ժամանակի պահանջ**

Այսպիսով՝ հասարակարգը ծնում է մի գաղափարախոսություն, որն էլ իր հերթին կարող է դառնալ մի նոր հասարակարգի համար սնուցող մայր: Այս առիթով պատմու-

թյունից կարելի է բերել բազմաթիվ օրինակներ՝ սկսած անտիկ շրջանի հունական դեմոկրատիայից, շարունակելով անգլիական ուտոպիստների վիզիաներով և ֆրանսիական հեղափոխական գաղափարախոսություններով, մինչև ներկայիս տեխնիկական կտրուկ առաջընթացի հետ օրավուր փոփոխվող հասարակություններին ու հասարակարգերին՝ դիրքային և գաղափարական տարբեր մոտեցումներով: Հետևաբար մենք կարիք չունենք հորինելու ինչ-որ՝ օդից կախված գաղափարախոսություն, քանզի մեր անցյալի պատմությունը, հայկական իրականության այսօրվա սոցիալ-քաղաքական զարգացման միտումներն ու նպատակային ապագան մեզ պարզորոշ ուրվագծում են մեր առաջընթացի մոտավոր և հեռանկարային առաջադրանքները ու նույնիսկ՝ թելադրում նրա լուծման տարբերակները.

1. հզորացնել Հայաստանի Հանրապետության տնտեսությունը և այն հասցնել գերզարգացած երկրների սոցիալ-տնտեսական մակարդակին,
2. սատարել սփյուռքի հայ ազգակիցներին համայնքների տնտեսական, մշակութային և քաղաքական գործունեությունը զորացնելու հարցում, որն էլ իր հերթին կնախադրի՝
  - ա) նպաստել հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչման և «հայկական հարցի» լուծման ընդհանուր խնդրին՝ միջազգային պայմանագրերի և իրավարար վճիռների հիման վրա,
  - բ) այդ թվում նաև Արցախի կարգավիճակի հարցի լուծմանը,

- զ) հոգալ ցեղասպանության սերունդների՝ հայրենի հող վերադառնալու մասին և
- դ) համաշխարհային հասարակությանը միջազգային ատյաններում՝ որպես բարոյական և նյութական փոխհատուցում, ճանաչել տալ նրանց տարածքային իրավունքներն ու պահանջները և, ինչու՞ ոչ, առավել հեռանկարային ծրագիր նախատեսել՝ Արևմտյան Հայաստանի հայաբնակեցումից հետո ինքնավարության պետական տարբերակ ստեղծելու, ապա պատմական Հայաստանների մասնատված տարածքների միացման շուրջ:

Նման առաջադրանքներից մի քանիսի կատարումը սփյուռքում և ազգի տարածքային միավորում թեև տարերային ձևով, այսօր էլ տալիս է որոշակի պտուղներ, օրինակ՝ ցեղասպանության ճանաչման, Հայաստանին ցուցաբերվող մարդասիրական օգնության, սփյուռքահայ անհատների կողմից Հայաստանում որոշակի ներդրումներ կատարելու գործերում, թեև նրանց արդյունավետությունը և տեմպերը բավականին ցածր են, որի հետևանքը լինում է ժամանակի կորուստը, ինչը համաշխարհայնացման գործընթացում, (ի նկատի ունենալով արևմտյան երկրների կողմից ընդունված քաղաքական և տնտեսական գերիշխանություն հաստատելու համաշխարհայնացման սկզբունքները), վատ է անդրադառնալու թերզարգացած երկրների՝ այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության վրա: Իսկ մենք հետևյալ կառույցով առաջարկում ենք համաշխարհայնացումը ծառայեցնել մեր վերոհիշյալ նպատակներին՝ դառնալով նրա ակտիվ գործոններից մեկը, նամանավանդ այս կապակցու-

թյամբ հայերը, սփռված լինելով ամբողջ աշխարհում և սերտաճելով տարբեր համակարգերի ենթակառուցվածքների հետ, ունեն մի առանձնահատուկ հնարավորություն, դիրք և լծակներ՝ վերջիններիս տեղաշարժելու՝ հոգուտ հայանպաստ գործի:

Այս հանգամանքում մեկ անգամ ևս կարևորվում է **հայկական աշխարհի համաշխարհայնացումը**՝ ստեղծելով փոխկապակցված և փոխկախյալ (ինտերդեպենդենտ) հարաբերություն ներքին և արտաքին, **պարտադիր կամավոր** կապեր սփյուռքի, Հայաստանի Հանրապետության պետական կառույցի և նրա մարզային ու համայնքային վարչական միավորների, ԼՂՀ-ի և տարբեր երկրների սփյուռքահայ համայնքների միջև, որն ազգային ծրագրերի իրագործման ճանապարհին ծառայելու է որպես կառույց և միջոց:

Այս միտման զարգացումը ժամանակի պահանջն է, քանի որ ինչպես Հայաստանի իշխանությունների, այնպես էլ սփյուռքում կենտրոնացված մեծ միավորների հետաքրքրությունների և շահերի միջև գոյություն ունեցող դինամիկ և արհեստականորեն զարգացված հակասությունների առկայությունը մեծ մասամբ ոչ միայն կասեցնում են համագործակցության բազմաթիվ ջանքերը, ինչպես օրինակ՝ արգելակում սփյուռքահայության լայն ներդրումային հնարավորություններն ազգի տարածքային միավորում, այլև՝ հանգեցնում բացահայտ իշխանության համար տարվող էքստեն և ինտեն բախումների: Այս ախտանիշի հետևանքներից ցայտուն օրինակ կարելի է բերել ՀՀ առաջին նախագահի վարչակազմի բացահայտ պայքարը սփյուռքի ամենաազդեցիկ կուսակցության՝ Հայ Հեղափոխական

Դաշնակցության դեմ: Հետևյալ պարագայում, անշու՛շտ, չի կարելի անտեսել նաև Արցախյան պատերազմի, հայաստանյան ծանր տնտեսական ճգնաժամի և շրջափակման պայմաններում Հայաստանի ներքին անկայուն իրավիճակի և նման դեպքերում արտաքին ուժերի ազդեցության գործոնները: Այնուամենայնիվ իշխանավարման այսպիսի անոմալ երևույթների առկայության պատճառները կարելի է փնտրել մի համալիր կառույցի բացակայության մեջ, որն ինչպես կհամակարգեր սփյուռքահայության և ազգի տարածքային միավորների համագործակցական իշխանավարման նպատակաուղղվածությունն, այնպես էլ կկարողանար առկայումս գոյություն ունեցող սոցիալական, քաղաքական և ազգային խնդիրների հարթեցումը խթանել մեկ այլ՝ առավել բարձր ու արդյունավետ հարթության վրա:

## **Սփյուռքի և ազգի տարածքային միավորի սահմանումները և վերջիններիս առանձնահատկությունները**

Իհարկե՛, երկուստեք կան ուժեր, որոնք պնդում են, թե և՛ ազգի տարածքային միավորի, և՛ սփյուռքի զարգացումը պետք է թողնել ինքնահոսի՝ հասարակական զարգացման դինամիկայի օրենքներին, որ յուրաքանչյուր կառույց պետք է մնա անփոփոխ, անկախ և գոյություն ունենա ինքնավարման տարբերակով: Այս առիթով առարկելու ոչինչ չունենք և չենք էլ պահանջում որևէ միավորի ինքնավարության քայքայում կամ միաձուլում, միանշանակ՝ ոչ: Ելնելով արևմտյան երկրների կոնստրուկտիվիստների (կառուցվածքա-

բանների)՝ իրականությունը որպես մարդկային ձեռքով կերտված կառույցի տեսությունից, միայն ձգտում ենք գոյություն ունեցող այդ միավորների ենթակառուցվածքների **կամավոր միահյուսման** համար ստեղծել պայման և տալ շատ թե քիչ օբյեկտիվ, իրավաբանական և կառուցվածքային ձևակերպում, այն էլ՝ միայն և միայն համահավասար հարթության վրա՝ հավասարազոր հարաբերությունների առկայությամբ: Որպեսզի ակնառու դարձնենք այս միտքը, կփորձենք հետևյալ հատվածում տալ

1. սփյուռքի և որպես տարածքային միավոր՝ ազգի սահմանումները,
2. ներկայացնել նրանց ամենափոքր ու ամենամեծ կառուցվածքային միավորներն ու նրանց միջև գոյություն ունեցող հարաբերությունները, որոնք ստորև կծառայեն մեզ համակարգի ենթակառուցվածքների մշակման գործում որպես հիմք,
3. առաջարկել տրված համակարգերի հարթությունների վերաբերյալ մոդելային տեսությունների տարբերակներ,
4. դրանք տեղայնացնել հայկական աշխարհում և կատարել նրանց միջև համեմատություններ:

Նույն մշակութակիր և էթնիկական խմբին պատկանող անհատների միությունը կամ խումբը, որոնք կամ որոնց նախնիները պատմական ողբերգական իրադարձությունների հետևանքով, սոցիալ-քաղաքական ճգնաժամի բերումով և անձնական խնդիրների տեղային լուծման դժվարությունների պատճառով բռնագաղթվել կամ կամովին լքել են

իրենց պատմական բնօրրանը և ներգաղթելով ու սեփական ինքնությունը պահպանելու նպատակով միմյանց հետ միավորվելով օտար տարածքային պետական միավորում՝ առկա հասարակության մեջ ներկայացնում են որոշակի կազմակերպվածություն ունեցող փոքրամասնություն, կարող ենք անվանել սփյուռք:

Այսպիսով, ելնելով այս սահմանումից, կարելի է նկատել, որ սփյուռքի ամենափոքր կազմակերպված բջիջն անհատն է, իսկ մարմինը՝ հասարակական միությունը, որն էլ իր հերթին հող է նախապատրաստում համայնք ձևավորելու գործում: Փոքրամասնությունները օտար պետ-վարչական համակարգերում, որոնց մենք պայմանականորեն կանվանենք մայր համակարգեր սփյուռքի անդամների համար, իրենց մտածելակերպով և վարվելակերպով տարանջատվում են տեղաբնակներից՝ փորձելով ինտեգրվել տվյալ հասարակության մայր կառույցում և զուգահեռաբար պահել, պաշտպանել սեփական «ես»-ի արժեքները, որոնք նրանք ժառանգաբար ստանձնել և սերնդեսերունդ են փոխանցել՝ դեռ մայր համակարգից հեռանալուց առաջ: Այս երևույթը հայի համար ինչ-որ տեղ ունի իր ողբերգական, բայց և մոտիվացնող բնույթը, քանի որ, այսպիսով ստեղծվում է մի երկդիմի և երկկենցաղ անհատ, որը լիարժեքորեն չի պատկանում կողմերից որևիցե մեկին, բայց ինչը և նրա համար խթան է հանդիսանում, չկորցնելով իր սեփական ազգային արժեքները, միաժամանակորեն ստեղծել բարեկեցիկ կյանք իր և ընտանիքի համար: Վերոհիշյալ երկու գործընթացների իրագործման հաջողությունը կախված է ինտեգրվելու և բազմամշակութակիր հասարակություն ու-

նենալու նկատմամբ մայր համակարգերի հասարակական և պետաիրավական հանդուրժողականություն ցուցաբերելուց, ինչպես նաև տվյալ փոքրամասնության վճռականությունից:

Ըստ մայր համակարգերի վարչատարածքային առանձնահատկությունների՝ սփյուռքը բաժանվում է երկրների և մայրցամաքների բնութագրման, օր՝.

- ամերիկահայ,
- կանադահայ կամ
- Եվրոպայի հայկական համայնքներ, այդ թվում՝
- ռուսահայ,
- ֆրանսահայ համայնք և այլն:

Յուրաքանչյուր համայնք, իր մեջ ներառելով մի ամբողջ քաղ-մշակութային բարդույթ, իր հասարակական կառուցվածքով, հայկական իրականությունում խնդիրների լուծման գործընթացներին մոտեցման առանձնահատկություններով տարբերվում է մյուս համայնքներից: Դա միանգամայն պարզ և հասկանալի է, քանզի յուրաքանչյուր համայնքային փոքրամասնություն իր կազմակերպչական գործընթացի ժամանակ առաջին հերթին ուղղորդվում է դեպի մայր համակարգի իրավական բազան՝ ենթարկվելով տվյալ պետական միավորի օրենքների վարչաիրավական սահմանումներին և նրա կառավարող մարմինների կողմից փոքրամասնությունների հետ տարվող ընդհանուր քաղաքական օրինագծին, ինչպես նաև կոնկրետ հայ համայնքների նկատմամբ ունեցած անհատական վերաբերմունքին՝ հաշվի առնելով վերջիններիս ներդրումները, կշի-

որ և դիրքը այս կամ այն երկրի պետական կառույցում: Այս առիթով պարտավոր ենք նաև ակնարկել մայր համակարգերում պետական հետաքրքրությունների ոչ միանշանակ դիրքորոշումը հայ համայնքների կողմից տարվող քաղաքական, մշակութային և տնտեսական գործընթացների նկատմամբ: Այսպես օրինակ՝ եթե ֆրանսահայ և հունահայ համայնքները ցեղասպանության ճանաչման գործում նշյալ երկրների վարչա-իրավական մարմինների կողմից աջակցվել են և այսպիսով գրանցել ակնհայտ հաջողություններ, ապա նույն խնդրում թուրքահայ համայնքը չի էլ փորձել այս ուղղությամբ որևէ քայլ ձեռնարկել՝ առաջին հերթին զգուշանալով թուրքական իշխանությունների հետ հակասության մեջ մտնելուց և դրա հետևանքով սեփական ազատությունը, կայքը և վերջապես կյանքը վտանգելուց, իսկ գերմանահայ համայնքը Բունդեսթագի կողմից ցեղասպանության ճանաչման գործում ի վերուստ դատապարտված է եղել ոչ լիարժեք հաջողության, քանզի Գերմանիայի Դաշնային Հանրապետության ներպետական և արտաքին քաղաքական շահերը հակասում են նման քաղաքական ակցիան միանշանակորեն որպես ցեղասպանություն որակելու՝ առաջինը իր տարածքում ունենալով մոտ 1, 5 մլն գերմանահայատակ ազգությամբ թուրք քաղաքացիներ, որոնք կազմում են տնտեսական և քաղաքական բավականին մեծ ներուժ, և, երկրորդը՝ չցանկանալով Առաջավոր Ասիայում իր սերտ դաշնակցին այս լուրջ մեղադրանքներով ծանրաբեռնել, մանավանդ այս հարցում գերմանացիների նախահայրերի դերն էլ միանշանակ չի եղել: Իսկ Գերմանիայի կուսակցությունների կողմից «հայկական ջարդերի

ել տեղահանությունների» ճանաչման առիթով 2006թ.-ի միջկուսակցական հայտագիրը պայմանավորվում էր Գերմանիայի ներքին քաղաքականության մեջ կուսակցությունների որոշակի ուժային բախումներով ու տեղաշարժերով, նպատակ ունենալով արգելակել Թուրքիայի մուտքը դեպի Եվրոմիություն: Իսկ 2016թ.-ի հունիսի 2-ին Գերմանական Բունդեսթագի կողմից Հայոց Յեղասպանության ճանաչման բանաձևն առ այսօր չի գտնում իր դրույթների իրագործման համարժեք քայլերը գերմանական ինչպես դաշնային, այնպես էլ երկրամասային կառավարությունների կողմից, այսպիսով կրելով գրեթե ձևական բնույթ:

Սփյուռքահայ համայնքների կազմակերպչական առաջատար դերը մեծ մասամբ ստանձնում է հայ առաքելական եկեղեցին, որն այսօր ինստիտուցիոնալ տարբերակով քիչ թե շատ կենտրոնաձիգ ուժ է կազմում սփյուռքահայ հասարակությունների համար, չնայած վերջինիս հիերարխիկ կառուցվածքը և պահպանողական դիրքորոշումը բազում խնդիրների լուծման մեջ հաճախ հակասական մթնոլորտ է ստեղծում սփյուռքահայ մտավորականների և այլ հասարակական կառուցվածքների մոտ: Եկեղեցու հայապաշտպան դերը կարծես սերտաճած ներդաշնակում է սփյուռքում գործող հայ քաղաքական և տնտեսական կուսակցությունների ուղեգծերի հետ՝ մի կողմից վերջիններիս ծառայելով որպես հայ ազգային գաղափարախոսության հենակ, մյուս կողմից՝ ուղղակի կամ անուղղակիորեն նրանց աջակցելով սեփական շարքերը նոր անդամներով համալրման, քաղաքական և տնտեսական դրույթների իրագործման, հայ սերունդների կրթման և դաստիարակման և այլ հա-

յապաշտպան ձեռնարկներում: Սփյուռքահայ քաղաքական կուսակցություններից խոշորագույնը և ակնառուն Հայ Հեղափոխական Դաշնակցությունն է (ՀՅԴ), որն այսօր ունի աշխարհասփյուռ հստակ կառուցվածք և իր տնտեսական ու քաղաքական լծակների օգնությամբ ի զորու է ներթափանցելու և ազդեցություն գործելու ազգի տարածքային միավորում պետականության կառուցման գործընթացի վրա: Տնտեսական խոշորագույն պոտենցիալ է զբաղեցնում Հայ Ռամկավար Ազատական Կուսակցությունը (ՀՌԱԿ), որի գործունեությունն ինչպես ՀՀ-ում, այնպես էլ սփյուռքում ընդգրկում է ազգային քաղ-տնտեսական համակարգում լայն ասպարեզ: Կուսակցությունների ֆունկցիոնալ այսպիսի բաժանումը պայմանական է՝ հաշվի առնելով նրանց ներկայիս զբաղեցնող գործունեության ոլորտը հայ իրականության մեջ:

Այսպիսով՝ սփյուռքահայ իրականության մեջ ստեղծված է քաղաքական, կրոնական և հասարակական միավորներից կազմված հայկական կառուցվածքային բարդ մի գունապատկեր, որը չնայած ունի ներքին որոշակի համախմբվածություն և կազմակերպվածություն, բայց գործունեության սահմանափակ դաշտ և ոչ համալիր կառույց՝ կախված լինելով մայր համակարգերում գործող համընդհանուր պետաիրավական սկզբունքներից:

Ի տարբերություն սփյուռքահայ համայնքների հասարակական կառուցվածքներին, Հայաստանի Հանրապետությունն ունի ձևավորված վարչաիրավական, օրենսդիր և գործադիր մարմինների մի համալիր բարդույթ, որը հենված էր և գործում էր առ 2018 թվականը նախագահական


կառավարման գերապատվություն ունեցող տարբերակով: 2018թ.-ից այն անցավ խորհրդարանական կառավարման կարգի՝ ՀՀ վարչապետին և գործադիր մարմնին օժտելով շատ լայն իրավունքներով: Սխալ կլիներ այստեղ հավասարազոր համեմատություն անցկացնել ազգի պետական համակարգի և սփյուռքի համայնքային հասարակական և կուսակցական կառուցվածքների միջև, քանի որ առաջինը պետական ուժի ներկայացուցիչ է, որը բնութագրվում է քաղ-մշակութային ինքնավարության, ազգային ինքնագիտակցության հատկանիշներով և էթնիկական, լեզվական, մշակութային ընդհանրություններն ու տնտեսական կյանքի և տարածքային ամբողջականությունը պահելու կամքով՝ այս նպատակով գործի դնելով իշխանության պետ-համակարգային լծակները, իսկ երկրորդը՝ օտար պետական համակարգերում ինքնակամորեն փոքրամասնությունների կողմից կազմված հասարակական միություններ և քաղաքական կուսակցություններ են, որոնց գործող լծակներն ակնհայտորեն սահմանափակ ազգային կամարտահայտման պետաիրավական դաշտերում են գտնվում: Չնայած ազգի՝ որպես տարածքային միավորի, օրենսդիր և գործադիր անկախության լայն հնարավորություններին, սփյուռքում գործող կառույցների տնտեսական հզորությունը և գերակշռությունն ընդհանուր առմամբ ակնհայտ են, որի նախապայմաններն ու նախապատմությունը մեզ ուղեկցում է դեպի սփյուռքահայ համայնքների մայր համակարգերի անցյալը և զարգացման անհատական պատմությունը՝ հատկապես Արևմտյան երկրներում:

Այսպիսով՝ հայկական աշխարհն այսօր ունի մի կող-


մից ձևավորված ազգային պետականություն, որն ի դեմս Հայաստանի Հանրապետության, զբաղեցնում է սեփական ներկայացուցչությունը և ծայնի իրավունքը միջազգային աստաններում, իսկ մյուս կողմից էլ տնտեսապես հզոր սփյուռք, որի հայապաշտպանության, ավելի ճիշտ կլիներ ասել ինքնապաշտպանությանը, այսինքն՝ ինքնահաստատմանը և ազգի զարգացմանը նպատակաուղղված ծրագրերը կարիք ունեն ազգային պետական հովանավորության: Ահա այս կետում անհրաժեշտ է գործարկել «տալու և վերցնելու» մեջ հավասարակշռության մասին դրույթը՝ տնտեսական ուժի դիմաց քաղաքական փոխզիջումներ:

## **Համակարգային մոդելների առաջարկ, ընտրություն և տեղայնացում հայկական աշխարհում**

Ելնելով վերոհիշյալ բնութագրումներից և սահմանումներից՝ հարց է ծագում, թե համակարգային ինչպիսի մոդել ստեղծել, որը լրացնելով և համալրելով երկու կողմերի «կարիքներն»՝ առանց կողմերի իշխանավարման գործընթացներում սահմանափակումներ մտցնելու և առանց փոխադարձ շահերին դիպչելու, կկարողանար հող ստեղծել հավասարազոր հարաբերություններ կառուցելու և փոխադարձաբար համակարգային միավորների մեջ ներթափանցելու համար: Այս առիթով կցանկանայինք հետևյալ կառույցն առաջարկել, որը թեև համաշխարհային պրակտիկայում նորույթ չի, բայց հայկական աշխարհում այս իրողությունը դեռ չի ներմուծվել:



1. Վեց բաղադրիչներով հավասար հարթության վրա համակարգային մոդել



2. Վեց բաղադրիչներով պատճառահետևանքային, գծային (կառուցալ) մոդել

Եթե մենք վերը պատկերված բաղադրիչներն (0) ընդունենք որպես համակարգային միավորներ, իսկ նրանց միջև կապը (-) միավորների միջև փոխադարձ հարաբերություններ, որոնք փոխադարձաբար միմյանց մեջ ներթափանցման օգնությամբ ստեղծում են միահյուսված մեկ ընդհանուր համալիր համակարգ, ապա վերոհիշյալ մեր կողմնորոշումից դառնում է ակնառու, որ նախապատվությունը մենք այս մանիֆեստում տալիս ենք առաջին մոդելին՝ այսպիսով երաշխավորելով միավորների ինքնավարության պահպանումը համահավասար հորիզոնական հարթության վրա, քանի որ պատճառահետևանքային (կառուցալ) մոդելներով, որոնք հանգեցնում են հիերարխիկ կառույցի ձևավորմանը, համակարգային ասպարեզում գործում են ավտորիտար կառույցները և այդ պատճառով հարաբերությունները շատ ժամանակ միակողմանի և բռնապետական բնույթ են

կրում, ինչը պրագմատիկ տեսանկյունից դիտարկած՝ չնայած ավելի հեշտ կառավարելի է, բայց վերջ ի վերջո հանգեցնում է համընդհանուր կառավարման անարդյունավետ ձևի և բացի այդ պետական արտաքին հարաբերությունների պրագմատիզմից ելնելով՝ այն այսօր համաշխարհային հասարակությունում չի հանդուրժվում ժողովրդավարական երկրների կողմից: Այս հիմքի վրա էր կառուցված նաև մեզ բոլորիս հայտնի դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքը նախկին Խորհրդային երկրներում, որն ակնհայտորեն չարդարացրեց իր վրա դրված ֆունկցիաները:

Եթե մենք այժմ այս միավորներն ու նրանց հարաբերությունները տեղայնացնենք հայկական աշխարհում, հաշվի առնելով վերը նշված, սփյուռքի և ազգի՝ որպես տարածքային միավորի, միավորների դասակարգումները և թվերի փոխարեն այդ միավորներին պայմանականորեն տանք տարածքային անվանումներ, ապա կստանանք հետևյալ պատկերը.

1. Հայաստանի Հանրապետություն
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
3. Ամերիկահայ համայնքներ
4. Եվրոպայի հայ համայնքներ
5. Մերձավոր Արևելքի հայ համայնքներ
6. Եվ այլ աշխարհամասերի և տարածաշրջանների հայկական համայնքներ:

Իհարկե, վերոհիշյալ միավորներից յուրաքանչյուրը բաժանվում և զբաղեցնում է ավելի փոքր միավորներ, ինչպես օրինակ՝ 1.Հայաստանի Հանրապետությունը՝ մարզե-

րի և վերջիններս էլ շրջանների, գյուղական և քաղաքային համայնքների, 2.Ամերիկահայ համայնքը՝ Կանադահայ համայնքի, ԱՄՆ-ի հայ համայնքի, Արգենտինահայ համայնքի և այլն, 3.Եվրոպայի հայկական համայնքները՝ ռուսահայ համայնքի, ֆրանսահայ համայնքի, գերմանահայ համայնքի և այլն:

Ահա մոդելային այսպիսի կառույցի և բնականաբար միավորների կամավոր միավորման տարբերակով է **ամբողջության գաղափարը տարանջատվում ամբողջատիրության դրույթներից**: Այս կետում մեզ օգնության կարող է հասնել կառուցվածքաբանության տեսության մեջ արևմտյան երկրների կուտակած հարուստ փորձն ու պրակտիկան, որոնց սկզբունքների հիմքի վրա է այսօր Եվրոմիությունը կանգուն և գործում: Արևմտյան կառուցվածքաբանների դրույթների համա- և հակադրումներից հետո դրանք կարելի է տեղայնացնել հայկական աշխարհում գոյություն ունեցող միավորների համակարգման համար: Ինքըստինքյան հասկանալի է, որ այս երկու գործընթացներն ունեն զարգացման և ձևավորման իրենց յուրօրինակ առանձնահատկություններն ու մշակութային նախապատմությունը և որ եթե կառուցվածքաբանության մինչև այսօր մշակված տեսությունները միայն պետական վերջնական ձևավորված համակարգային միավորների տեսանկյունից են դիտարկվում, ապա սփյուռքը չի կարելի դիտարկել որպես ինքնանկախ պետական կառույց, ուստի և այստեղ չի կարող խոսք գնալ այս տարբերակների նույնատիպ էժանագին կրկնօրինակման մասին, մանավանդ եթե հաշվի առնենք այնպիսի պարագաներն, ինչպիսին են հայ անհատի

առանձնահատկությունը, հայ հասարակության զարգացման նախապայմանները, ազգային մտածելակերպերի, պատմամշակութային արժեքների տարբերություններն ի հակադրություն Արևմտաեվրոպական ժողովուրդների և այլն: Շեշտը ցանկանում ենք դնել ներկայացվող համակարգի կառուցման գործընթացի ժամանակ սկզբունքային մոտեցումներում վերը նշված պրակտիկայից հայկական աշխարհի առանձնահատկություններին համապատասխանող որոշակի տարրերի ներմուծման վրա:

Ո՞րն է այս խնդրի առկա հիմնաքարը, ինչի վրա կարելի էր փոխադարձ շահագրգռվածության առկայությամբ զարգացնել այս տեսությունը. սույն հարցի պատասխանը կարելի է փնտրել յուրաքանչյուր հայի՝ որպես անհատի և ազգ հասկացության ամենափոքր տարրի, հոգեբանական և սոցիոլոգիական վերլուծության մեջ: Գերմանական Բոխում քաղաքի համալսարանին կից ցեղասպանության և սփյուռքի հարցերով զբաղվող ինստիտուտի կազմակերպած «Համաշխարհայնացումը և հայկական աշխարհը» սեմինար-միջոցառման ժամանակ հնչեց հայերի զգացմունքային ներքին կապի մասին մի դրույթ. այն է, որ յուրաքանչյուր հայ թե՛ սեփական պատմության ողբերգական դեպքերի հետևանքով, և թե՛ ուրույն աշխարհընկալման գերզգայունակ բնույթով, իր ներաշխարհով կապված է սեփական արմատների, հողի և նույն մշակույթը կրող ազգակիցների հետ: Թեև այդ կապը բազմաթիվ դեպքերում արտահայտվում է միայն զգացմունքային դրսևորումներով, օր՝ . պոռթկումներով, թախիծով, լացով, խոսքային փոխանակման միջոցներով և այլն, սակայն գործնական բնույթի մեջ այս

կայն առավել սակավ դրսևորումներ է գտնում, ինչը պայմանավորված է հայերի, որպես խառը մշակութակիրների, տարբեր մտածելա- և գործելակերպեր ունենալու, իրերին համակարգային և անհատական տարբեր մոտեցումներ ցուցաբերելու հետ: Այս հանգամանքը դժվարացնում է ինչպես իրավական անձանց և մարմինների, այնպես էլ իշխանավարող ուժերի միջև միասնական «խաղի կանոններ» մշակելու գործընթացը: Յուրաքանչյուրն իր բնագավառում ու տարածքում գործում է «փոքրիկ իշխանիկի» հոգեբանությամբ՝ հայկական խնդիրներում իր սեփական դերի և ճշմարտության բացառիկությունը շեշտելու հակումով: Դե՛ ինչ, գուցե և հանգամանքներն ու սեփական կյանքի փորձը, առավել ևս անհատական հաջողությունները, յուրաքանչյուրին համոզում են իր «բացառիկ օբյեկտիվության» մեջ, իսկ մեր դերն էլ այս մանիֆեստում չի կայանալու այդ «ճշմարտությունները» խնդրո առարկա դարձնելը, այլ՝ փնտրել մի տարբերակ դրանց գաղափարական նմանություններն ու տարբերությունները փոխզիջումային տարբերակով բերելու մեկ ընդհանուր տանիքի տակ՝ նկատի առնելով յուրաքանչյուրի ակնկալիքներն ու առաջարկները, որպեսզի սփյուռք-Հայաստան կապում «տալու և վերցնելու» միջև պահպանվի հավասարակշռությունը:

Սկզբից վերադառնանք այս կառույցի պոտենցիալ ճարտարապետներին. ովքե՞ր կարող են լինել այս կառույցի հիմնադիրներն ու մասնակիցները և ինչպիսի՞ ընդգծումներով պետք է մոտենալ այս խնդրի իրագործմանը:

Երկուստեք կան բազմաթիվ փորձեր ազգի տարածքային միավորի զարգացման նպատակով ստեղծելու փոխ-

համագործակցության տնտեսական և քաղաքական միջանկյալ օղակներ՝ կազմակերպություններ, ինստիտուցիաներ և այլ կառույցներ շփման փոխադարձ եզրեր գտնելու նպատակով: Հարցին այս կերպ մոտեցումն ի վերուստ դատապարտված է ձախողման, նույնիսկ այն դեպքում, եթե հաշվի առնենք վերոհիշյալ զգայական կապն ու հայրենիքի համար որևէ բան անելու անհատի խիստ ցանկությունը, քանի որ այն նախադրում է խնդրին միակողմանի մոտեցում: Այստեղից էլ հարց է ծագում, իսկ մինչև այժմ ի՞նչ գործնական քայլեր է ձեռնարկել ազգը՝ որպես տարածքային միավոր, այսինքն՝ հայրենիքը, սփյուռքի ինչպես քաղաքական միավորի, այնպես էլ տնտեսական գոյապաշտպանության և զարգացման համար. բանավեճեր և բազում անգամ արծարծված և ձախողված երկակի քաղաքացիության թեման, թե՛ այս կամ այն մշակութային միջոցառումների կազմակերպում և հայ գրականության ու պատմության գրքերի տրամադրում սփյուռքի համայնքներին, այն էլ անհավասարաչափ բաշխմամբ: Եվ այս նույն ինտենսիվությամբ վստահորեն կարելի է հարցադրումն ուղղել սփյուռքում գործող կուսակցությունների և համայնքների գործիչներին, թե արդյո՞ք նրանք բավականին բարձր գին չեն պահանջում իրենց ներդրումների և օգնության դիմաց, որն էլ իր հերթին առաջ է բերում ՀՀ իշխանությունների բացասական հակազդեցությունը նրանց սպասելիքների և պահանջների նկատմամբ:

Մի՞թե ապագայում սա է լինելու «միասնական խաղի» ճանապարհը: Պատառիկներով չի կարելի ակնկալել այս խնդրի կոմպլեքսային լուծումը, քանի որ յուրաքանչյուր

իշխանության համար թե՛ քաղաքական, տնտեսական և մշակութային մոտեցման տեսանկյունից, և թե՛ վարչարարության հիմքերից ելնելով՝ մշտապես առաջնային պլանում գոյություն կունենա սեփական հետաքրքրության և շահադիտական միտումը, որն էլ իր հերթին պառակտող սուբյեկտ կարող է հանդիսանալ ցանկացած քաղաքական լուրջ ձեռնարկի մեջ՝ լինի այն այս թե այն կողմից կազմակերպված: Հաշվի առնելով նման պարագան՝ կամա թե ակամա հանգում ենք իշխանության միացյալ ուժերի տարբերակին, որին կարող են մասնակից լինել ինչպես ազգային միավորում և սփյուռքում իշխանավարող բոլոր կառուցվածքային ուժերն ու խմբավորումները՝ կուսակցությունները, կազմակերպությունները, ընդհուպ մինչև «Հայաստանի Հանրապետության» իշխանությունները, այնպես էլ ցանկացած հայ անհատ, որը ներքնապես կապված է ազգի միավորման գաղափարի հետ:

**«Համահայկական Դաշինքը» որպես  
Հայաստան-Արցախ-Սփյուռք միացյալ  
ուժերը համակարգող համալիր  
տարբերակ**

Որպեսզի խուսափենք բառերի և արտահայտությունների տեղատարափից, եկե՛ք իշխանության այս երրորդ տարբերակին պայմանականորեն անվանենք **Համահայկական Դաշինք**, որի դերը կայանալու է, ինչպես վերը նշեցինք, գոյություն ունեցող աշխարհասփյուռ ուժերի միջև երկկողմանի իշխանավարման հավասարակշռությունը պահելու,

դրանք առկա և հեռավոր քաղաքական, տնտեսական, մշակույթային խնդիրների լուծման նպատակով կանոնակարգելու և համագործակցային ծրագրերն արդյունավետ օգտագործելու մեջ: **Այլ կերպ ասած՝ սպեղծել Հայաստանի Հանրապետության և սփյուռքի մեխանիզմները միահյուսող, կոորդինացնող և համակարգող մի համալիր իշխանավարման կառույց** իր օրենսդիր և գործադիր մարմիններով հանդերձ՝ թևերում այն բաժանելով տարածքային երեք միավորների. Հայաստանի Հանրապետություն, որտեղ Համահայկական Դաշինքի քաղաքականությունն է մշակվելու և ծավալվելու, ԱՄՆ, ուր հիմնադրվելու են վերջինիս տնտեսական ենթակառուցյունները և դրանք կոորդինացվելու ու կառավարվելու են այստեղից և Արևմտյան Եվրոպա, որտեղ նպատակահարմար է Համահայկական Դաշինքի մշակույթային օղակների տեղաբաշխումը: Իշխանության այսպիսի տարածքային պայմանական բաժանման ժամանակ, ուշադրության արժանացնելով հավասարակշռության մասին վերոհիշյալ թեզը, հաշվի են առնվել հայության մեծամասնության կուտակումներն ու նրանց տնտեսական և քաղաքական ներուժի ուժային դասավորությունները: Համահայկական Դաշինքին հիմք և ուղեցույց է ծառայելու Համահայկական Դաշնագիրը, իսկ նրա գերագույն մարմինը լինելու է **Համահայկական Համագումարը**: Առավել մանրամասն պատճառաբանություններն ու հիմնավորումներն այս կապակցությամբ առանձին-առանձին կքննարկվեն հետևյալ մանիֆեստի ստորև բերված քաղաքականության, տնտեսության և մշակույթի վերաբերյալ գլուխներում:


Այս միտքը դեռ տասը տարի առաջ կթվար խելացնո-

րություն, քանի որ այն պահանջում է գերիզոր կապային և ֆինանսական միջոցներ: Բացի այդ, այժմ էլ կծագեն բազմաթիվ խնդիրներ կառույցների և նրանց մեխանիզմների գործունեությունների տեսակների սահմանման, մասնագիտական և կադրային դերակատարների ընտրության, նրանց տեղաբաշխման, վերջիններիս աշխատանքների փոխադարձ կոորդինացման, իշխանության ենթակառուցվածքների անվտանգության պահպանման և վերջապես վարչական որոշումների և գործնական օպերացիաների իրականացման հարցերում: Սակայն նման կազմակերպչական խնդիրներում չպետք է թերագնահատել գերժամանակակից կապի տեսակների և կոմունիկացիոն միջոցների, ինչպիսիք են ինտերնետը, ինտրանետը և այլն, ազդեցությունների և հնարավորությունների դերը: Իսկ ֆինանսավարման տարբերակում բռն ըստ սեփական կարողության համամասնությամբ պայմանագրային տարբերակով կիսելու է յուրաքանչյուր հայ կամ հայամետ անդամ-քաղաքացի, իհարկե՝ դրա դիմաց ակնկալելով նաև պահանջի դեպքում այս կառույցի սոցիալ-քաղաքական և իրավական դաշտից օգտվելու իրավունքները: Առավել մանրամասն այս թեմայի շուրջ կքննարկենք մի փոքր ավելի ուշ:

## Կառուցվածքն ընդհանուր հայացքով (հորիզոնական)



# Կառուցվածքն ընդհանուր հայացքով (ուղղահայաց)



# ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## Դաշնագիրը որպես նորմավորող ինստիտուտ Համահայկական Դաշինքի համար

Ինչպիսիք քաղաքական կառույցներ է ունենալու վերոհիշյալ մեր Համահայկական Դաշինքը, ինչն է կազմելու նրա քաղաքական բազան, ինչ քաղաքական ուղեգիծ է որդեգրելու այն, հաշվի առնելով այս մանիֆեստի առաջաբանում հիշատակված համահավասար հիմքերի վրա դրված միավորների և նրանց հարաբերությունների մոդելային տարբերակի սկզբունքը, և որոնք են լինելու նրա առաջնային խնդիրները (նպատակաուղղվածությունը տե՛ս Առաջաբանում): Արդյո՞ք իշխանավարման ժողովրդավարական տարբերակը կգործի այս կառույցում և եթե այո՞, ապա ինչպիսիք կառավարման տարբերակ առավելագույնս կնպաստեր մեր վերոհիշյալ մոդելի արդյունավետ գործունեությանը ու նրա ժողովրդավարական սկզբունքների պահպանմանը և ինչ վերահսկման մեթոդներ կարող են այստեղ առաջարկվել, որպեսզի այս կառույցի կենսունակությունը և անխափան աշխատանքը կարելի լիներ տևականորեն ապահովել:

Նախ և առաջ կցանկանայինք ներկայացնել արևմտյան տեսակետները, հատկապես կառուցվածքաբանների սահմանումներն ու ընդհանուր կարծիքները «քաղաքականություն» հասկացության վերաբերյալ, եվ ապա դրանք հիմք ընդունելով մեր տեսության մեջ՝ իշխանավարման գործընթացում ընդհանուր եզրագծեր գտնել՝ քաղաքականության

վարման մի օպտիմալ տարբերակով դրանք մեր վերոհիշյալ կառույցում տեղայնացնելու համար:

Քաղաքականությունն ըստ 16-րդ դարի փիլիսոփա Մաքիավելու «...միջոցների մի հանրագումար է, որոնք իշխանության գալու, այն պահելու և վերջինիցս օգտվելու համար անհրաժեշտ են, ... այսպիսով՝ քաղաքականությունը հանգամանքների բերումով և իշխանավորի կամ ժողովրդի հզորությունից (virtu), ինչպես նաև ժամանակային պարագայի սպեցիֆիկ տեսակից կախված վերաբերմունք է իշխանության նկատմամբ...» (Մաքիավելի, մոտ 1515թ.):

Իսկ 20-րդ դարասկզբի հայտնի սոցիոլոգ և քաղաքագետ Մաքս Վեբերը հետևյալ ձևակերպումն է տալիս. «...Քաղաքականությունը իշխանավարմանը մասնակից լինելու և իշխանությունը բաշխելու վրա ազդեցություն ունենալու ձգտում է, լինի այն մեկ պետության մեջ, թե՛ մարդկանց այն խմբերի միջև, որոնց նա ներառում է...» (Մաքս Վեբեր, 1919թ.):

Ելնելով համեմատական և տեղայնացնող մեր սկզբունքից՝ կարող ենք պնդել, որ վերոհիշյալ այս երկու սահմանումները կարևորում են համաշխարհային հասարակությունների մեջ հայկական աշխարհի ինքնուրույնաբար իշխանավարմանը մասնակից լինելու, այսինքն՝ անկախ քաղաքականություն վարելու պահանջարկը: Այստեղ տեղին կլիներ լսել այն հակաճառությունները, որ ի դեմս Հայաստանի Հանրապետության՝ որպես ազգի տարածքային միավորի, աշխարհի ինքնանկախ պետական կառույցների հասարակության մեջ հայկական աշխարհի մասնակցու-

թյունն արդեն իսկ ապահովված է: Այս դեպքում կպատշաճեր ասել, որ թերևս համաշխարհային քաղաքականությանը ՀՀ-ում բնակվող հայերի մասնակցությունն ու վերջիններիս շահերի ներկայացումն է որոշակիորեն ապահովված, բայց ոչ աշխարհասփյուռ բոլոր հայերի: Քանզի ՀՀ-ն լինելով ինքնանկախ պետություն, առաջին հերթին իր պետական շահն է ներկայացնում և այն պաշտպանում համաշխարհային բեմահարթակում, և ապա՝ սփյուռքի, այն էլ օպցիոնալ ձևով: Ահա սրանով են պայմանավորված ՀՀ-ի վարած արտաքին քաղաքականության մեջ առկա և ապագայում էլ առկա լինելիք սփյուռքի այս կամ այն միավորի շահերին հակասող քաղաքական մոտեցումները: Այս առումով լավագույն օրինակ կձառայի «ԱԶԳ» թերթում 30/09/2004թ.-ին հրատարակված «Հանդիպում Մոսկվի հոգևոր հովիվ Տեր Գարեգին քահանայի հետ» հոդվածից մի հատվածի մեջբերումը.

«...Երեկ հանրապետության վարչապետ Անդրանիկ Մարգարյանը լրագրողների այն հարցին, թե նա ինչպես է վերաբերվում իրաքահայերին օժանդակելու հորդորներին, պատասխանել է, որ այդ հորդորներն իրենք կարող են լսել, սակայն կա նաև պետության շահը: «Եթե հորդորները չեն խանգարում մեր պետական քաղաքական շահերին, այդ հորդորները մենք անպայման կլսենք», - ասել է վարչապետը»:

Այս պարագայում մեկ անգամ ևս զգացվում է Համահայկական Դաշինքի որպես միջնորդի և որպես աշխարհասփյուռ հայերի միջև, ՀՀ-ի ու սփյուռքի շահերը նորմավորող, նրանց հարաբերությունները քաղաքական, տնտե-

սական և մշակութային գործընթացներում կանոնավորող ինստիտուցիոն դերի անհրաժեշտությունը:

Մաքիավելու և Մաքս Վեբերի «քաղաքականության» վերաբերյալ վերը նշված սահմանումներում բացակայում է համակարգային կառույցների այն բարդույթը, որից ելնելով՝ հնարավոր կդառնար համեմատականներ անցկացնել և լեգիտիմացնել Համահայկական Դաշինքի քաղաքական գաղափարը սոցիալ-համակարգային տեսանկյունից:

Ուստի տեղին կլիներ այստեղ քննարկման նյութ դարձնել գերմանացի կառուցվածքաբանների ժամանակակից կարկառուն տեսաբաններից մեկի՝ Նիկլաս Լուիմանի, տեսակետը վերոհիշյալի մասին. «...Քաղաքականությունը սոցիալական գործընթացների մի բարդույթ է, գործընթացներ, որոնք հատկապես ծառայում են որպես երաշխիք վարչական (գործնական) վճիռները կատարելու համար: Քաղաքականությունը պետք է լինի պատասխանատու, լեգիտիմացնի վարչարարական գործնական վճիռները և վերջիններիս իրականացման համար տրամադրի իշխանության համար պահանջվող բազա...»:

Սոցիալական գործընթացների բարդույթի, նրա վարչական վճիռների կատարման համար սովորաբար բազա են ծառայում պետական և հասարակական կառույցներում նորմավորող օրենքները, որոնք, կախված տվյալ կառույցի տեսակից, կարող են բխել մեկ ընդհանուր գերագույն նորմավորող ակտից, օրինակ՝ սահմանադրությունից, կամ տվյալ հասարակության մեջ խորը արմատավորված բարքերից ու սովորույթներից, ըստ որի պետությունները տա-

րանջատվում են սահմանադրական և ոչ սահմանադրական տեսակների:

Սահմանադրության ընդունումը մեր կողմից առաջարկված կառույցի համար թերևս տեղին կլիներ, եթե այս կառույցի միավորներն ու նրանց միջև գոյություն ունեցող հարաբերությունների բարդույթը հոմոգեն լինեին: Համահայկական Դաշինքի կառույցների նորմավորման պարագայում պետք է հաշվի առնել նրա անդամների՝ որպես բազմամշակութակիր անհատների, նրանց մտածելակերպի, վարվելակերպի ու հետաքրքրությունների բազմազանության առկայությունը և վերջիններիս միավորող այն առանձնահատուկ գծերն ու երևույթները, որոնց շուրջ մենք խոսեցինք այս մանիֆեստի առաջաբանում: Այս պարագայում տեղին կլիներ Համահայկական Դաշինքի կառույցի համար թերևս որպես բազա ընդունել **Դաշնագիրը**, որը պետք է հիմք ծառայի Համահայկական Դաշինքի ածանցյալ օրենքների և այլ իրավաբանական ձևակերպումների համար, որոնք իրենց հերթին ի զորու կլինեն տարբեր բնագավառներում կանոնակարգելու համակարգային միավորների միջև գործող հարաբերությունները: Դաշնագրի բովանդակությունը կարիք կունենա այսպիսի մի համալիր կառույցի համար իր մեջ ամփոփելու ինչպես հայ անհատի բարքերի ու սովորույթների, հավատի, իղձերի ամբողջությունը (մանրամասնությունը տե՛ս Առաջաբանում), այնպես էլ պարտավոր է իր մեջ ներառել նրա միջազգային օրենքներին հարիր լինելու փաստը, քանի որ Համահայկական Դաշինքի տարբեր պետ-վարչական համակարգերում և նրանց իրավաբանական դաշտերում գործող միավորների

միջև հարաբերությունների ծավալումը միայն հնարավոր կդառնա միջազգային իրավունքի կիրառումով:

## **Սփյուռքի և մայր համակարգի մեծությունների և նրանց հարաբերությունների սահմանում**

Իսկ այժմ անդրադառնանք Համահայկական Դաշինքի համակարգային կառույցներին և նրանց ենթակառույցներին.

Նիկլաս Լուիմանի կողմից վերը նշված «սոցիալական գործընթացների» կատարումն ընդհանուր առմամբ տարանջատվում է արտաքին և ներքին քաղաքականությունների վարման ուղղությունների: Եթե ներքին քաղաքականությունը մեկ պետական միավորում ծառայում է ներպետական կառույցների, քաղաքական և տնտեսական ուժերի, նրանց շահերի հարաբերությունները կանոնավորման նպատակով որպես իշխանավարման երաշխիք, ապա Համահայկական Դաշինքի կառույցի պարագայում իշխանավարման այդ երաշխիքը ուղղորդված կլինի ներկառույցային միավորների և նրանց մասնակից-անդամների շահերի կարգավորմանը: Մեծություն մենք անվանում ենք այն ավարտված համալիր կառույցը, որն ունի իրավական սահմանում, ձև, անդամների որոշակի թիվ և ճանաչված է որևէ մի պետական և/կամ հասարակական միավորի կողմից: Ի նկատի ունենալով սփյուռքի համայնքների ոչ համալիր կազմակերպված լինելու հանգամանքը և ՀՀ-ի ու ԼՂՀ-ի վարչա-տարածքային ստորաբաժանումները, ինչպես նաև

ելնելով արևմտյան ժողովրդավարության համահավասար հարթությունների վրա միավորների միջև հարաբերություններ ստեղծելու սկզբունքից՝ որոշեցինք կատարել կառույցային հետևյալ ստորաբաժանումները.

1. ՀՀ մարզային համայնքները<sup>1</sup>,
2. ԼՂՀ-ի շրջանային համայնքները<sup>2</sup>,
3. ՀՀ կուսակցությունները,
4. ԼՂՀ կուսակցությունները,
5. սփյուռքահայ կուսակցությունները,
6. սփյուռքահայ միությունները,

---

1 Կառաջարկեինք, որպեսզի ՀՀ մարզային համայնքների ներկայացուցիչներն ուղղակիորեն ընտրվեն մարզային խորհուրդների կողմից, սակայն նրանց լեգիտիմացումը կատարվի միայն ՀՀ օրենսդիր, գործադիր և դատական մարմինների կողմից՝ վերջիններիս ընտրությունը վերահաստատվելուց հետո: Այսպիսով կապահովվի Միացյալ Համահայկական կառույցում խորհրդարանական ընտրության կարգով ժողովրդավարության սկզբունքը, ինչը, որպեսզի չվտանգվի ՀՀ պետական ինքնանկախությունը, կգործի ՀՀ պետական բարձրագույն իշխանությունների վերահսկմամբ: Այս տարբերակը նաև կարևորվում է ներկայացուցիչների որակի (արհեստավարժության) ապահովման հարցում:

2 Կառաջարկեինք, որպեսզի ԼՂՀ շրջանների ներկայացուցիչներն ուղղակիորեն ընտրվեն շրջաններում, սակայն նրանց լեգիտիմացումը կատարվի միայն ԼՂՀ օրենսդիր, գործադիր և օրենսդրական մարմինների կողմից վերջիններիս ընտրությունը վերահաստատվելուց հետո: Այսպիսով կապահովվի Միացյալ Համահայկական կառույցում խորհրդարանական ընտրության կարգով ժողովրդավարության սկզբունքը, ինչը, որպեսզի չվտանգվի ԼՂՀ պետական ինքնանկախությունը, կգործի ԼՂՀ պետական բարձրագույն իշխանությունների վերահսկմամբ: Այս տարբերակը նաև կարևորվում է ներկայացուցիչների որակի (արհեստավարժության ապահովման) հարցում:

7. սփյուռքի բարեգործական, քաղաքական և մշակույթային կազմակերպությունները,
8. սփյուռքի գիտական ինստիտուտները և հաստատությունները,
9. եկեղեցին իր նվիրապետական չորս աթոռներով՝
  - Ամենայն Հայոց Կաթողիկոսություն,
  - Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսություն
  - Երուսաղեմի Հայոց Պատրիարքություն,
  - Կ. Պոլսի Հայոց Պատրիարքություն,
10. Վերոհիշյալ միավորներից ամենափոքր միավորը ֆիզիկական անձն է, որը մի քանի միավորներում մասնակից-անդամ լինելու դեպքում իրավունք ունի ներկայացուցչական ձայնի իրավունքով համամասնական մեծամասնությամբ կառույցում ներկայացնել միայն մեկ համակարգային միավորի շահը: Այսպիսով հնարավոր կլինի խուսափել ներկայացուցչական ձայների թվի աղավաղումից: Ավելի ուշ առավել մանրամասնորեն կանդրադառնանք այս թեմային ընտրակարգի մեխանիզմներում:

## **Համահայկական Համագումարը որպես «Համահայկական Դաշինքի» ներկայացուցչական մարմին**

Համահայկական Դաշինքի ներկայացուցչական մարմին է ծառայելու Համահայկական Համագումարը, որի դերն ու նշանակությունը կայանալու է վերոհիշյալ համա-

կարգային միավորների շահերը և հետաքրքրությունները կորդդինացնելու, նրանց գործողությունների համաձայնեցումը Դաշնագրի միջոցով նորմավորելու, համաձայն վերջիններիս պահանջների և պարտականությունների՝ ծրագրային ընդհանուր որոշումներ և ուղեգծեր գտնելու և ընդունելու, ինչպես նաև դրանց կատարումը վերահսկելու մեջ: Դաշնագրի դրույթների առաջարկումը, ընդունումը և հնարավոր փոփոխությունների կատարման իրավունքը վերապահվում է միայն և միայն Համահայկական Համագումարին: Համահայկական Համագումարը պարտավոր է իր աշխատանքների կատարման ժամանակ ապահովել իր ենթակառույցների բաց և թափանցիկ գործունեությունը: Այս իսկ պատճառով կառաջարկեինք նաև այն դարձնել համակարգային միավորների համար որպես հաշվետու մարմին՝ իր մեջ ներառելով հրապարակայնության միջոցները, ինչպիսիք են մամուլը, հեռուստատեսությունը, ռադիոն և ինտերակտիվ կոմունիկացիոն միջոցները: Համագումարը կառաջարկեինք գումարել 3 տարին մեկ անգամ պարբերությամբ՝ ի նկատի առնելով ինչպես միջանկյալ ժամանակահատվածում ծրագրերի կատարման համար բավարար ժամանակ տրամադրելու, այնպես էլ նման միջոցառման կազմակերպման համար ֆինանսական բավարար բազա հավաքելու փաստարկները:

Ժողովրդավարության այսպիսի ներկայացուցչական տարբերակը անշուշտ կարիք ունի իր թևերում ստեղծելու գործադիր ենթակառույցներ, որոնք ելնելով Համահայկական Համագումարի ներկայացրած դրույթներից և ընդհանուր մոտավոր ծրագրային ուղեգծից՝ ի զորու կլինեն Հա-

մագումարների կայացման միջանկյալ ժամանակահատվածներում մշակելու, իրագործելու և վերահսկելու տարբեր բնույթի կոնկրետ ծրագրեր:

## **Ընտրական մեխանիզմը «Համահայկական համագումարի» ընտրություններում**

Ժողովրդավարության սկզբունքներից ելնելով՝ «Համահայկական Դաշինք» կառույցի ներկայացուցչական մարմնի՝ Համահայկական Համագումարի, անդամներն ընտրվում են: Վաղօրոք Դաշնագրում սահմանվում են ընտրակարգ և ընտրական իրավունք: Ընտրություններ կազմակերպելու նպատակով խոշոր կառույցներում (կենտրոնական խորհուրդներ, եկեղեցիների Առաջնորդարաններ, անդամաշատ կուսակցություններ, ՀՀ և ԱՀ համայնքներ) ստեղծվում են ընտրական հանձնաժողովներ, որոնք էլ պատասխանատու են ընտրությունները կազմակերպելու և անցկացնելու համար:

Ֆիզիկական անձի ձայնի իրավունքով **Համահայկական Համագումարում** ընտրական մեխանիզմ գործարկելն այսպիսի կառույցում շատ դժվար է, քանզի հստակեցված չեն սփյուռքի համայնքներում և նրանցում գործող կառույցներում առկա չափահաս անձանց ընտրություններին մասնակցելու իրավունքով օժտված անդամների թվաքանակը: Սակայն առկա է այս հարցի մեկ այլ լուծում սփյուռքի համայնքների և գաղթօջախների համար: Խոշոր կառույցները (օրինակ՝ կենտրոնական խորհուրդները, եկեղեցիների

Առաջնորդարանները, անդամաշատ կուսակցությունները) կարող են իրենց անդամ հանդիսացող ենթակառույցներից (համայնքներից, միություններից և այլն) ներկայացուցչական ձայնի իրավունքով ընտրված անդամներ ձեռք բերել և նրանց ներկայացնել Համահայկական Համագումարում: Այդ ենթակառույցները (համայնքները, միությունները և այլն) հստակորեն պետք է փաստեն, թե իրենց կառույցում ճշգրիտ որքան ֆիզիկական անձիք են անդամագրված: Որպեսզի անդամների թիվը հստակ փաստվի, ենթակառույցները պարտավոր են ներկայացնել իրենց կառույցի անդամ հանդիսացող անձանց մուծված տարեկան անդամավճարների կտրոնները: Ապա 25.000 ֆիզիկական անձիք 1 ձայնի համամասնությամբ, ըստ կառույցների խմբերի, կորոշեն ներկայացուցչական ձայնի իրավունքով օժտված ընտրվածին: Իհարկե, այս մեխանիզմը կարելի է կիրառել միայն սփյուռքի համար, իսկ ազգի տարածքային միավորում անհրաժեշտ է կիառել երկակի վերահսկողությամբ ընտրություններ՝ հաշվի առնելով այնտեղ տեղի ունեցած ընտրական կեղծիքներով լի անցյալը, ինչպես նաև ժողովրդին հեշտությամբ մանիպուլյացիայի ենթարկելու համգամանքները: Առաջնահերթությամբ անցկացվելու են համայնքային, ապա մարզային հարթություններում ընտրություններ: Վաղօրոք յուրաքանչյուր համայնք ներկայացնում է իր բնակիչների թվաքանակը՝ փաստելով դրա իսկությունը: Այս նպատակով հիմք պետք է հանդիսանան կոնկրետ համայնքներում և մարզերում ընտրություններից առնվազն 3 ամիս առաջ անցկացված թարմ ժողովրդագրական տվյալները: Ընտրաձայների համամասնությունն այստեղ

նույնպես պահպանվումը է 1:25.000-ի հարաբերությամբ: Ազգի տարածքային միավորում (ՀՀ և Արցախ) վերջնական ընտրվածների թվաքանակին, տեղի կառավարությունների որոշմամբ, ի նպաստ վերջիններիս, ավելացվում է յուրաքանչյուր 1 ընտրված ծային ՀՀ և ԱՀ կառավարությունների կողմից ևս 1 նշանակված ներկայացուցչական ծայն: Վերոնշյալ դիտավորության նպատակն է, հայաստանակենտրոնությունն ապահովելու համար ազգի տարածքային միավորներում իշխանությունների՝ օրենսդիր, գործադիր և դատական մարմինների դերի բարձրացնելն ու ամրապնդելը Համահայկական Դաշինքում: Այս առաջարկն, անշուշտ, արսիոմատիկ չէ և այն դեռ ենթակա է զննման և ճշգրիտ մաթեմատիկական հաշվարկների:

## **Համահայկական «Հանձնառույթը» որպես «Համահայկական Դաշինքի» գործադիր մարմին**

Համահայկական Դաշինքի գործադիր մարմին է ծառայելու համահայկական «Հանձնառույթը», որը կոչված է լինելու կատարել համահայկական համագումարի որոշումները, ինքնուրույն նախաձեռնությամբ նախանշելու, մշակելու և ի կատար ածելու քաղաքական, տնտեսական և կրթա-մշակութային ծրագրեր Դաշնագրում սահմանված դրույթների շրջանակներում, ընտրելու վերջիններիս իրագործման համար մարտավարություն, տալու և դառնալու ուղեցույց հայասփյուռ աշխարհում և ազգի տարածքային միավորում հրատապ խնդիրների լուծման համար:

Համահայկական Հանձնառույթն իր ծրագրերի իրագործման համար բաղղատված է լինելու հետևյալ ենթակառուցային ստորաբաժանումների.

1. Հումանիտար գիտություն

- քաղաքագիտություն և հասարակագիտություն
- պատմություն, փիլիսոփայություն
- բանասիրություն
- գրավոր և բանավոր թարգմանություններ
- մանկավարժություն և հոգեբանություն
- լրագրություն և հրապարակախոսություն
- իրավագիտություն և իրավաբանություն
- աստվածաբանություն, միջեկեղեցական կապեր

2. Տեխնիկա և բնագիտություն

- ինֆորմատիկա, SS
- մաթեմատիկա
- ֆիզիկա և աստրոֆիզիկա
- քիմիա
- կենսաբանություն
- բժշկագիտություն և ժողովրդական բժշկություն
- ճարտարագիտություն (ինժեներիա) և մեխանիկա

3. Մշակույթ

- գրողներ և բանաստեղծներ
- երաժիշտներ
- պարարվեստ

- գեղարվեստ
  - ֆոտոարվեստ և վավերագրություն
  - ֆիլմ և բեմարվեստ (թատրոն)
  - սպորտ
4. Կրթություն
- դպրոցներ
  - վարժարաններ
  - բարձրագույն հաստատություններ
  - համալսարաններ
  - գիտահետազոտական ինստիտուտներ
  - մեկօրյա կամ երկօրյա դպրոցներ
  - գիտությունների ակադեմիա
5. Արդյունաբերություն, գյուղատնտեսություն, առևտուր և սպասարկում
- արդյունաբերություն, ա.թ. տտ
  - գյուղատնտեսություն
  - ֆինանսներ և բանկեր
  - մեծածախ առևտուր
  - մանրածախ առևտուր և փոքր ձեռնարկություններ
  - արհեստագործություն և անհատ ձեռներեցներ
  - հրատարակչություն և հրատարակչական գործ
  - այլ սպասարկման ոլորտի ծառայություններ
6. Ճարտարապետություն և շինարարություն
- ճարտարապետություն, շինարարական ինժեներիա


- շինարարական ձեռնարկություններ
- փոքր շին. ձեռնարկություններ և անհատ արհեստավորներ

Յուրաքանչյուր ստորաբաժանում ընդգրկված է վերոդրյալ ոլորտային և բնագավառային հատվածների, որոնք համակարգելու, կոորդինացնելու և վարելու համար Համահայկական համագումարի կողմից ընտրվում են ոլորտային հանձնախմբեր և նրանց համար նշանակվում պատասխանատու ղեկավարներ: Իսկ վերջիններս էլ ձայների բացարձակ մեծամասնությամբ ընտրում են Համահայկական Հանձնակատարին: Համահայկական Հանձնառույթի հանձնարարականները սկսվում են ընտրության և նշանակման պահից առ մինչև հաջորդ Համահայկական համագումարի ընտրությունները: Հանձնախմբերը 1 գործնական տարվա պարբերությամբ հաշվետու են Համահայկական Համագումարին:

# Վարչա-քաղաքական կառույցի հորիզոնական սխեմա, վարչական կառույցի տեղակայման վայրը՝ ՀՀ



# Վարչա-քաղաքական կառույցի ուղղահայաց սխեմա, վարչական կառույցի տեղակայման վայրը՝ ՀՀ



# ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## Ընդհանուր սոցիալ-տնտեսական բնութագիր

Համահայկական Դաշինքի տնտեսական դրույթների կանոնակարգումը շատ ավելի խրթին գործ է, քան նրա քաղաքական մասը: Որքան հայկական սփյուռքը սփռված է մայրցամաքներով և տարբեր երկրներով մեկ, այնքան բարդանում է մեկ ընդհանուր կանոնակարգում գտնելու գործը: Ընդհանուր առմամբ տնտեսապես հզոր երկրները բաժանված են այսօր երեք ճամբարների՝ սոցիալիստական (վերցնելով Չինաստանի մոդելը), ազատ շուկայական (նկատի առնելով ԱՄՆ տնտեսվարման ձևը) և սոցիալական ուղղորդվածություն ունեցող եվրոպական երկրների տարբերակը: Այս ամենին գալիս է բարդացնելու տարբեր երկրների մաքսային և հարկային տարաբնույթ օրենսդրություններն ու սոցիալական տուրքերի կարգավորումները, բազմաբնույթ տնտեսա-առևտրային գոտիների առկայությունն ու տնտեսական դաշինքների գոյությունը: Այստեղից էլ հարց է առաջանում, թե ինչպիսի ուղղորդում պիտի ստանա Հայկական Դաշինքի այս կառույցը տնտեսության կազմակերպման ոլորտում և Դաշնագրի մեջ ի՞նչ սկզբունքը կամ սկզբունքները պիտի ներառվեն: Ինչպես վերը նշվեց, այս կառույցի տնտեսական թևի տարանջատումը և նրա ենթակառույցի հաստատումը խորհուրդ է տրվում տեղաբաշխել ԱՄՆ տարածքում՝ նկատի ունենալով վերջինիս տնտեսա-

կան թելադրողի դերն արդի աշխարհում և տեղի հայկական համայնքի տնտեսական գերակա ներուժը, սակայն սա դեռ չի նշանակում, որ մեր կառույցի մոդելավորումը պետք է տեղի ունենա ազատ շուկայական հարաբերությունների հիմքի վրա, որի քաղաքականությունը որդեգրել է ԱՄՆ տնտեսությունը: Այն պետք է բավականին ճկուն կազմվի և ներառի տարրեր ու բաղադրիչներ թե՛ մեկից և թե՛ մյուսներից՝ հաշվի առնելով հայկական աշխարհի աշխարհասփյուռ հանգամանքը և ամենակարևորը՝ չմիջամտի տեղում տնտեսվարողների ներքին տարաբնույթ գործնական հարցերին (տնտեսվարողի ավտոնոմիայի պահպանում):

Համահայկական Դաշինքի տնտեսական դրույթներն իրենց արտացոլանքը պետք է գտնեն վերոնշյալ քաղաքական սկզբունքներում: Տնտեսական մոդելավորման համար դրանք կարելի է պայմանականորեն բաժանել մակրո- և միկրոտնտեսական գործառական տարբերակների: Ի տարբերություն ժողովրդական տնտեսության (մակրոտնտեսության) ազգի պետական միավորում ավանդական մեխանիզմների կիրառմանը՝ Համահայկական Դաշինքում այս խնդիրն առավել քան բարդ է լուծելը, քանզի այստեղ գրեթե անհնարին է դառնում նրա համար գործիքակազմ ստեղծելը և վերջինիս հիմնական պարամետրերի կիրառությունը՝ նկատի առնելով մայր համակարգերում ընդգրկված կառույցում հնարավոր դերակատարների տարբեր հարկային և մաքսային, սոցիալական, իրավա-պետական համակարգերում գտնվելու հանգամանքը, վերջիններիս վարած տնտեսական քաղաքականությունը և միջազգային քաղտնտեսական նորմերի հարիրությունը Համահայկական Դաշնագրի դրույթներին:

## **Տնտեսական և սոցիալական դրույթների սահմանում և իրագործում**

Տնտեսական և սոցիալական գործառույթներն են.

- ընդհանուր տնտեսական ապրանքների, դրամական շուկայի, աշխատանքային բորսայի, արժեթղթային բորսայի գործառույթների ստեղծումը և դրանց նորմավորումը մեկ ամբողջական Համահայկական Դաշինքի կառույցում՝ սրանից բխող ապրանքա-դրամային շրջանառության ապահովումով,
- Համահայկական Դաշինքում դրամական արժույթի սահմանումը, այս համատեքստում Համահայկական բանկի ստեղծումն ու գործարկումը, Հայկական Դրամի ներգրավումը և դիվերսիֆիկացումը սկզբում այս կառույցի շրջանակում և ապա դրանից դուրս,
- ընդհանուր տնտեսական ազգային շուկայի ձևավորումը սփյուռքում և ազգի տարածքային միավորում, նրաց բաղադրիչների միջև փոխկապակցվածությունն ու վերջիններիս վերլուծությունը,
- ընդհանուր տնտեսական գործառույթների վերահսկողությունն ու դրանց անվտանգության ապահովում:
- Համահայկական Դաշինքի դրամական ելքերի և մուտքերի սահմանումը, կրկնակի հարկահավաքության կամ դրամական պարբերական գանձումների միջազգային հնարավորությունների ստուգումը և թերևս վերջիններիս մեխանիզմների ստեղծումը՝ սրանից բխող Համահայկական Դաշինքի բյուջետավորմամբ և բյուջետային ծրագրերի սահմանումով ու իրագործումով,

- Համահայկական Դաշինքի կառույցում սոցիալական և առողջապահական ապահովագրության մեխանիզմների ներառումն ու կիրառումը,
- բարեգործական, մշակութային և գիտա-կրթական ոլորտի զարգացմանն ուղղված Համահայկական Դաշինքի հիմնադրամի ստեղծումը: Սփյուռքի և ազգային տարածքային միավորի տվյալ պետա-իրավական մայր համակարգերի հանրային միջոցներից դրամական օժանդակ միջոցների ներգրավումը՝ ընդունված տարաբնույթ ծրագրերի իրագործման համար:

Վերոնշյալ գործառույթների իրականացման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, թե որ իրավա-տնտեսական մայր համակարգում և ինչ գնողունակության շուկայում են դրանք կիրառվելու՝ դրանից բխող հետևություններով:

Այս խնդիրներին որոշակի լուծում տալու համար կարելի է առանձնացնել մարտավարական մոտեցումներով հետևյալ առաջարկները.

1. միջազգային տնտեսական փոխգործակցության օրենքներին հարիր համապատասխան գործիքակազմով միկրոտնտեսական մեխանիզմների ստեղծում և գործարկում՝ օգտագործելով արդի ինտերակտիվ տեխնոլոգիաները,
2. այս մեխանիզմների կիրառումը Համահայկական Դաշինքի տնտեսական և քաղաքական նպատակների իրագործման համար՝ նպաստավոր դաշտ ստեղծելով մակրոտնտեսական գործառույթների ներաճմանը, դրանց արժևորմանն ու հեռանկարային զարգացմանը,

որին հիմք կկազմի տնտեսական վերը թվարկված գործիքակազմը,

3. տարբեր պետա-իրավական մայր համակարգերում ընդգրկված սփյուռքյան միավորներում վերոնշյալ գործառույթները սկսելու, կոորդինացնելու և ղեկավարելու ուղղությամբ Համահայկական Դաշինքի վարչա-տնտեսական մասնաճյուղերի տեղերում ստեղծում և ձևավորում՝ վերջիններիս կանոնադրական կարգը բխեցնելով ազգային և միջազգային օրենսդրությունից և Համահայկական Դաշնագրի սկզբունքներից:

Մակրոտնտեսական գործառույթային մոտեցումները Համահայկական Դաշինքի շրջանակում պարտավոր է ապահովել տնտեսական թափանցիկություն, իրավական պայմանագրային նպաստավոր դաշտ նրա պոտենցիալ անդամ միավորների միջև, ինչպես նաև հաշվի առնել սոցիալական արդարության սկզբունքը՝ վերջիններիս փոխհարաբերության դրսևորման ընթացքում:

Բնականաբար տնտեսական այս համահայկական կառույցը չպետք է շեղվի վերոնշյալ համահավասար հարթությունների վրա գործող մոդելային ձևից: Վերջինիս կիրառությունը պետք է ապահովի տարբեր մեծության միավորների մեջ հնարավորինս առավելագույն ինքնուրույնություն, իսկ վերջիններիս փոխգործակցության հիմքը հասկանալիորեն պետք է կազմի պայմանագրային փոխհարաբերությունը: Աշխարհասփյուռ հայկական իրականության դեպքում կգործի ինչպես ազգային, այնպես էլ միջազգային տնտեսական պայմանագրերի նորմատիվային դաշտը՝ կախված միավորների նստավայրերի տեղակայումից: Հարցն

այստեղ առավել բարդանում է կապերի փոխգործակցության վստահելիության և անվտանգային դրույթների շուրջ, ինչպես նաև միջազգային նորմատիվներում անձի տվյալների պաշտպանության պահանջների օրեցօր խստացումներով, որը առավելապես պետք է նկատի ունենալ համացանցային ինտերակտիվ կապերի գործարկման ժամանակ և ժողովրդավարության ու մարդու իրավունքների նորմատիվների կիրառումով: Վերոնշյալ մակրոտնտեսական խնդիրների լուծմանն ուղղված միջոցները և սփյուռքի և ազգի տարածքային միավորներում պետք է փնտրել միկրոտնտեսական գործառույթների դաշտում, նրանց կրողների մեջ: Այսպիսով ինչից սկսել միկրոտնտեսության մեջ Համահայկական Դաշինք կառույցի բյուջեն կազմելու և տնտեսական գործառույթներն ապահովելու համար:

## **Համահայկական կապիտալի ներգրավման մեխանիզմներ**

Շատ է խոսվել սփյուռքի տնտեսական ներուժի մասին, նրանց մեջ լեգենդար արդյունաբերողների, առևտրականների և խոշոր ձեռնարկատերերի համաշխարհային դերակատարումներ ունենալու մասին: Սակայն այս ամենից միայն մի չնչին մաս է ներդրվել ազգի տարածքային միավորներ հանդիսացող Հայաստանում և Արցախում: Մեր գործը չի վերլուծել այս խնդրի պատճառներն, այլ միայն շեշտել, որ բիզնեսը ներկայումս ճանաչում է միայն շահույթի ավելացում և նպաստավոր ներդրումային դաշտ: Սրանից ելնելով՝ Համահայկական Դաշինքի նպատակն է գտնել ուղի-

ներ, որը հնարավոր կդարձնե հայկական և ոչ հայկական կապիտալի ներգրավումն ինչպես անհատ տնտեսվարողի և/կամ ներդրողի սեփական շահույթի բազմապատկման համար, այնպես էլ այս կառույցի վարչական կենսունակությունն ապահովելու և պահուստային ֆոնդ ստեղծելու համար, որպեսզի հնարավոր դառնա Համահայկական Դաշինքի վերոնշյալ քաղաքական նպատակների իրագործումը: Ի տարբերություն մակրոտնտեսության հարցում վերոթվարկյալ խնդիրների, միկրոտնտեսության բնագավառում Համահայկական Դաշինքի առաջադրանքների քանակը որոշակիորեն պակասում է, քանզի այն գործելու է հիմնականում արդեն գոյություն ունեցող տնտեսվարողների և ներդրողների հետ, որոնց պարտավորվում է փոխկապակցել միմյանց և ստեղծել սոցիալական հետաքրքրական միջավայր միմյանց միջև գործարար, մշակութային, գիտակրթական և հոգևոր հարաբերություններ հաստատելու ու զարգացնելու համար: Սակայն սա չի բացառում, որ գործընթացների զարգացման ընթացքում կառույցը ինքը կարող է դառնալ ծրագրերի հեղինակ և աշխատատեղերի ստեղծող ինչպես ազգի տարածքային միավորում, այնպես էլ սփյուռքում:

Սփյուռքի և ազգի տարածքային միավորներում մտավորականների, կրթության, գիտության, մշակույթի և գործարարների մտավոր ու նյութական ներուժի համախմբման և կոորդինացման նպատակով առաջարկվում է գործարկել համացանցային ինտերակտիվ բազմաֆունկցիոնալ մեկ հարթակ, որը լինելու է մասնագիտական հետաքրքրությունների համընկեցման կենտրոն և ծառայելու է վերջիններիս

միջև համահավասար հարթության վրա հաղորդակցման կապերի ստեղծմանը և ամրապնդմանը: Այն կնպաստի նաև հայ գաղթօջախներում տնտեսա-ֆինանսական և գիտական վերարտադրության աճի տեմպերի արագացմանը: Այս հարթակի նպատակն է նպաստել մասնագիտական միջուրտային կապերի զարգացմանը, ինչը կհանգեցնի նոր նախագծերի ծրագրավորմանն ու իրագործմանը ինչպես ՀՀ-ում և ԼՂՀ-ում, այնպես էլ սփյուռքահայ գաղթօջախներում:

Միջմասնագիտական համագործակցությունը կարող է դառնալ հնարավորությունների մի նոր որակ՝ աշխարհասփյուռ հայության իրականության մեջ գոյություն ունեցող ներուժի արդյունավետ ուղղորդման և գործարկման համար: Այն կստեղծի մտավոր-նախաձեռնողական նպաստավոր մի դաշտ, որը հնարավորություն կընձեռնի անհատ մասնագետներին դրսևորել սեփական կարողությունները հոգուտ ինչպես մայր համակարգերում գործող առկա գիտությանը, հասարակությանն ու տնտեսությանը, այնպես էլ կդառնա մի կամուրջ՝ կապելով և զարգացման ազդակ հանդիսանալով Հայաստան-Լեռնային Ղարաբաղ-Հայկական Սփյուռքի այլ գաղթօջախներում քաղաքականության, տնտեսության, գիտության և մշակույթի ոլորտներում նպատակաուղղված ծրագրային փոխհամագործակցությանը:

## **Բազմաֆունկցիոնալ SS հարթակը՝ որպես տնտեսական գործիք և բյուջետավորման գրավական**

Ի թիվս մնացյալի՝ SS հարթակի խնդիրները կարող են լինել.

1. համապատասխան բազմաֆունկցիոնալ ինտերակտիվ հարթակի միջոցով միջնորդավորել և կոորդինացնել բազմաբնույթ հասարակական, քաղաքական, տնտեսական, կրթական, գիտական, հոգևոր, բնապահպանական և մշակութային ծրագրեր,
2. որոնել հնարավոր պետական և հասարակական ֆինանսավորման աղբյուրներ, որոնք կնպաստեն վերոնշյալ ծրագրերի իրականացմանը և վերջիններս դասակարգմանն ըստ ծրագրային անհրաժեշտության և դրանց իրագործման հավանականության,
3. հաստատել կապ հովանավոր կազմակերպությունների, բարերարների, պետական մարմինների և հիմնադրամների հետ՝ պարզելու վերջիններիս կողմից ծրագրերի իրագործման նպատակով ֆինանսներ տրամադրելու հնարավորությունների, չափերի և ժամկետների մասին,
4. Մշակել սեփական բիզնեսի, հասարակական, քաղաքական տնտեսական, կրթական, գիտական և մշակութային ծրագրեր և/կամ մրցութային կարգով ուղղորդել դրանք հայ միություններին, կազմակերպություններին, ՀՀ և ԼՂՀ վարչական մարմիններին, գործարարներին, ընկերություններին և այլն:

Հարթակը գործելու է հետևյալ բանաձևի շրջանակում. Ունեն միտք, արի քննարկենք, կազմենք ծրագիր, ստեղծենք աշխատատեղ, այսպիսով ունենք ՄԻՏՔ → ՔՆՆԱՐ-ԿՈՒՄ → ԾՐԱԳԻՐ → ԱՇԽԱՏԱՏԵՂ գործընթացային բանաձևը:

Կառաջարկեինք այս համացանցային հարթակը պարունակեր հետևյալ գործիքակազմը.

1. ֆիզիկական և իրավաբանական անձանց, պետական և հանրային մարմինների տվյալների շտեմարան, որոնք էլ տալիս են իրենց համաձայնությունը անդամակցելու կառույցին և վճարելու սահմանված Համահայկական Դաշինքի տուրքը /անդամավճարը,
2. տեսալսողական և գրավոր քննարկումներ ծավալելու սոցիալան հարթակ,
3. տարաբնույթ ծրագրեր կազմելու համապատասխան գործիքներ,
4. աշխատատեղերի որոնման և առաջարկի բորսա՝ համապատասխան որոնողական և հայտագրման գործիքակազմով:

Սույն հարթակը կրում է միջնորդավորող բնույթ և համացանցման օգնությամբ բազմատեղ կցավարդակի դեր է կատարելու հայկական աշխարհում: Այն գտնվելու է Համահայկական Դաշինքի գործադիր ենթակառույցի գործարկման, կառավարման և վերահսկողության ներքո: (Տես նմանատիպ հարթակի մեկ օրինակ հետևյալ հղումում. [www.european-armenian-experts.eu](http://www.european-armenian-experts.eu) )

Իսկ որո՞նք են լինելու Համահայկական Դաշինքի նախ-

Նական տնտեսական շրջանառությունում եկամուտներն ու ծախսերը և որտեղից ձեռք բերել այս նպատակով մեկնարկային կապիտալը.

## **Բյուջետային ծախսեր և եկամուտներ. հավասարակշիռ տնտեսվարման բանաձև**

### **ԵԿԱՄՈՒՏՆԵՐ**

- Ծրագրերի միջնորդավորումից, գովազդից, անդամավճարներից / տուրքերից մուտքագրված հասույթով ձևավորվում է Համահայկական Դաշինքի բյուջեն:
- Համահայկական Դաշինքի բյուջետային եկամուտները կարող են ավելանալ Դաշինքի կողմից Համահայկական բանկի հիմնադրման և գործարկման արդյունքում և միջազգային բորսաներում սեփական արժեթղթերի դիվերսիֆիկացման օգնությամբ:
- Հիմնելով և գործարկելով համահայկական սոցիալական և առողջապահական ապահովագրություն՝ ստեղծվում է սոցիալական արդար հարաբերությունների համար բազա մուտքագրելով ապահովագրական տուրքերի գումարները:
- Համահայկական Դաշինքի կողմից ընդունված, մշակված և իրականացված սեփական տարաբնույթ ծրագրերից ստացված շահույթ:
- Արտաբյուջետային կարգով Համահայկական Դաշինք կառույցի հիմնադրամին բարեգործական և հոգևոր-ե-

կեղեցական նպատակներով կարող են ապահովել հասույթներով նաև անհատ բարերարների նվիրատվությունները և սփյուռքյան մայր համակարգերի կամ ազգի տարածքային միավորների կողմից տրամադրվող հանրային միջոցները, որոնք բնականաբար կունենան վերոնշյալ ոլորտներում կոնկրետ ծրագրերի կատարման ուղղորդվածություն:

## ԾԱԽՍԵՐ

Ծախսերն իրենց հերթին բաժանվում են միանվագ և պարբերական ծախսերի: Միանվագ ծախսերի մեջ են մտնում.

- Համահայկական Դաշինք կառույցի հիմնադրման կապիտալ ծախսերը
- Կապիտալ ներդրումային ծախսերը,
- Քաղաքական, արդյունաբերական, գյուղատնտեսական, առևտրային, մշակութային, գիտական, կրթական, բնապահպանական, հանրային և հոգևոր ծրագրերի համար պահանջվող ներդրումային ծախսերը ՀՀ-ում, ԼՂՀ-ում և սփյուռքյան գաղթօջախներում,
- Անշարժ և շարժական գույքի ձեռքբերման ծախսերը:

Պարբերական ծախսերի թվին են պատկանում.

- վարչարարական ծախսերը,
- ՏՏ խնամքի և մարքեթինգի ծախսերը,

- վարձակալական և կոմունալ ծախսերը,
- ապահովագրական ծախսերը,
- աշխատավարձերի և հոնորարների համար պահանջվող ծախսերը,
- մայր համակարգերում հարկերի և սոցիալական տուրքերի համար պահանջվող պարտադիր ծախսերը,
- մասնագիտական միություններին թերևս նաև արհմիութենական կոմիտեներին պարտադիր անդամակցության վճարները
- Այլ՝ չնախատեսված, տվյալ մայր համակարգում պահանջվող ծախսերը

Մակրոտնտեսավարման դրույթների իրականացման մեջ նպատակահարմար կլիներ եկամուտների և ծախսերի հավասարակշռության պահպանման մոդելներին տալ առավելություն (հիշենք առաջաբանում նշված «տալու և վերցնելու» հավասարակշռության սկզբունքը): Այս կապակցությամբ ներկայացնում ենք գերմանական Քիլ քաղաքի համալսարանի պրոֆ. դր. Հանս Վերներ Վոլտմաննի բանաձևը, որի համաձայն ամբողջ գույքային առաջարկը պետք է համապատասխանի ժողովրդական եկամուտին, այսինքն՝ մեր դեպքում համահայկական եկամուտին: Այս բանաձևն ունի սույն տեսքը.

$$Y^s = Y;$$

$$Y^s = Y^d;$$

$$Y^d = C + I;$$


$$C = C_0 + c q Y \quad (0 < c < 1);$$

$$I = I_0;$$


$Y^s$  = պլանային ապրանքների առաջարկ;  $Y^d$  = պլանային ընդհանուր պահանջարկ;  $Y$  = ռեալիզացված ապրանքների արտադրություն (համախառն տնտեսական արդյունք);  $C$  = սպառողական ապրանքների պահանջարկ;  $C_0$  = ավտոնոմ սպառում;  $c$  = մարգինալ սպառման քանակը;  $I_0$  = ավտոնոմ ինվեստիցիա. Գրաֆիկորեն հավասարակշիռ եկամուտը ստանում է հետևյալ բանաձևը.  $Y^G = 1 / (1 - c) q (C_0 + I_0)$

Այնուամենայնիվ սա դեղատոմս չէ և Հայկական Դաշինք կառույցի պարագայում նման տեսություններից հընթացս դեռ ամենահարիրը պետք է ընտրել և փորձարկել տվյալ մայր համակարգում համապատասխան իրականության մեջ:

# Տնտեսական հորիզոնական կառույց, վարչական կառույցի տեղակայման վայրը՝ ԱՄՆ



# Տնտեսական ուղղահայաց կառույց, վարչական կառույցի տեղակայման վայրը՝ ԱՄՆ



# ԿՐԹԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## Հայի ինքնության ձևավորման հենասյունները

Հայ մշակույթը մաս է կազմում Քրիստոնեական աշխարհի մշակույթը կրող երկրներին՝ իր մեջ ներառելով թե՛ արևելյան, և թե՛ արևմտյան երկրների մշակույթներից սերված գաղափարական, սովորության և հոգևոր ինքնատիպ տարրեր: Ինչպես միջկրոնական երկխոսության պատասխանատու Բեռլին-Բրանդենբուրգ երկրամասերի ավետարանական եկեղեցու գերապատվելի դոկտոր Անդրեաս Գյոտցեն է նշում, Հայաստանը հանդիսանում է կամուրջ Արևելքի և Արևմուտքի հոգևոր ու մշակութային արժեքների միջև: Ահա այս տեսլականից ելնելով՝ անհրաժեշտ է մշակել նաև Քրիստոնեական մեծ ընտանիքի արժեքներով մեր սերնդի շարունակական կրթման և դաստիարակման տեսլականը: Այն կազմել է և այսօր էլ կազմում է հիմք հայ անհատի մարդկային արժեքների և ինքնության ձևավորման համար:

Հայոց պատմության վաղեմի ժամանակներից առ այսօր հայի ինքնության պահպանման գրավականներն են եղել լեզուն, մշակույթը, կրոնը և պատմական հիշողությունը: Վերջիններս անքակտելի միավորներ են, որոնց նվազելու կամ լուծարվելու դեպքում հայ անհատը մասնավոր-

րապես սփյուռքում, բայց և նույնիսկ ազգի տարածքային միավորում վտանգել է հայ լինելու արժեքները և հետևանքում ժամանակի ընթացքում աստիճանաբար նաև իր ինքնությունը: Ինքնության ձևավորումը սկսվում է դեռ վաղ տարիքից: Եթե այսօր ազգի տարածքային միավորում ինքնության պահպանման հարցում միայն որակի բարձրացման խնդիր է ծառայված, քանզի վերջինումս լավ թե վատ հայկական մշակույթի, կրթության և հոգևոր ուսուցման որոշակի ազգային ձևաչափեր են գործում, ապա սփյուռքում ուժացման վտանգի առկայությամբ այս խնդիրը շատ է բարդանում: Այսպիսով Հայկական Դաշինքում կրթամշակութային քաղաքականությունը մշակելիս մենք մեր մոտեցումները բաժանում ենք երկու նպատակային խմբերի համար.

- Ա) Ազգի տարածքային միավորում կրթության, գիտության, մշակույթի և հոգևոր զարգացման նպատակով օժանդակող համալիր ռազմավարության մշակում և առաջարկ,
- Բ) սփյուռքի գաղթօջախներում հայազարգացման ռազմավարություն և մարտավարություն

## **Հայապահպանության առկա խնդիրները**

Սկսենք բ) կետից, քանզի վերջինս ամենախոցելի և ամենահայաշատ խումբն է: Ինչպես 2020թ.-ի մարտի 1-ին Եվրոպացի և Հայ Մասնագետների Ասոցիացիա հանրային կազմակերպության կողմից կազմակերպված «Բեռլինահայերի առկա խնդիրներն այսօր» թեմատիկ շարքից «Բեռլինի հայկական կիրակնօրյա դպրոցների խնդիրները» խո-

րագրով զրույց-բանավեճի ընթացքում հրապարակային կապերի մասնագետ և կրթության գծով համակարգող դր. Վազրիկ Բազիլը ներկայացրեց, հայկական ինքնության պահպանման նպատակով ընտանեկան դաստիարակության շրջանակում դեռ մանկահասակ տարիքից պետք է երեխաների ենթագիտակցության վրա ներազդել հայկական գունային, հոտառական և լսողական առարկաներով ու պատկերներով, օրինակ՝ ազգային երաժշտության, խնկի բուրմունքի և նուան քանդակապատկերի, համ ու հոտի և այլնի մատուցմամբ: Սա առանձնապես կարևորվում է սփյուռքում բնակվող մեր հայրենակիցների մատաղ սերնդի համար: Ինչ խոսք, ինքնության պահպանումը միայն ընտանեկան շփումներով չի ավարտվում, այլ նաև դպրոցական և բակային ընկեր-ընկերուհիների միջավայրում, որը սփյուռքում բնականաբար հայեցի չէ: Այս իսկ պատճառով այստեղ ձևավորվում են մի քանի մշակույթներ ներաշխարհող սփյուռքահայ անհատականություններ: Սփյուռքում Հայապահպանության օջախներ են հանդիսանում հայկական միությունները, ակումբները, դպրոցները:

Հայապահպանությունում սփյուռքյան հայկական կրթօջախների դերը պետք է առանձնացնել և հատկանշել, որ դրանք տարբեր երկրների սփյուռքյան գաղթօջախներում իրենց կառուցվածքային ու աշխատանքային կազմակերպվածությամբ և որակով բաժանվում են ընդհանուր առմամբ 2 խմբի.

1. Ամենօրյա վարժարաններ (օր.՝ Լիոնի Հայկական դպրոցը, Մելքոնյան վարժարանը, Հալեպի հայկական վարժարանը և այլն)

2. Կիրակնօրյա կամ երկօրյա դպրոցները, որոնք մեծամասնություն են կազմում հայկական համայնքներում:

Եթե ամենօրյա հայկական վարժարաններ կարողացել են ստեղծել հայաշատ գաղութները, որոնց տնտեսական և հաղորդակցման ներուժը բավարարել է նման կրթօջախներ հիմնադրելու համար, և որոնք իրենցից ներկայացնում են ընդհանուր ուսուցման (լրիվ կամ մասնակի) կրթական օջախներ, ուր ուսուցանվում են թե՛ հումանիտար, և թե՛ բնագիտական ու տեխնիկական առարկաներ, ապա կիրակնօրյա կամ երկօրյա դպրոցներում վերապահումով դասավանդվում են միայն Հայոց լեզու, և/կամ Հայ Գրականություն, և/կամ Հայոց Պատմություն, և/կամ Հայ Եկեղեցու Պատմություն, և/կամ Հայ Երգ-երաժշտություն, և/կամ Հայկական Պարեր, որոնք հիմք են հանդիսանում և խթանում են հայեցի կրթությանն ու դաստիարակությանը՝ այսպիսով հայ սերնդի ինքնության պահպանմանը:

Այս հանրօգուտ հասարակական կազմակերպությունները համարվում են կրթամշակութային կենտրոններ, դրանք միակ իրավաբանական ձևակերպումներն են, որոնց հիման վրա կատարվում են ազգապահպան և այլ հանրային գործառույթներ:

Իսկ ինչպիսի՞ կարգավիճակում են մեկօրյա կամ երկօրյա դպրոցները և ի՞նչ որակ են ապահովում այս հաստատությունները: Արդյո՞ք վերջիններս կարող են լուծել սփյուռքահայերին ուժացումից փրկելու խնդիրը:

Նախ վերլուծենք ուսուցման վիճակը մեկօրյա կամ երկօրյա այս կրթական հաստատություններում:

Վերլուծության ենթակա այս հարցին չպետք է ընդհանրացված մոտեցում ցուցաբերել, քանի որ յուրաքանչյուր դպրոց պետք է անհատական ձևով դիտարկվի. Նրանում աշխատող ուսուցիչների որակավորումը գնահատվի, հաճախող աշակերտների քանակը, տարիքային առանձնահատկությունների, դասարանների թիվը և անցկացվող դասաժամերի հաճախականությունը զննվեն: Այլապես դրպոցը միակ տեղն է, որն էականորեն ի վիճակի է հայապահպանության խնդիրները մատաղ սերնդի հայեցի կրթմամբ և դաստիարակմամբ մասնակիորեն լուծել:

## **Սփյուռքում գործող հայկական մեկօրյա կամ երկօրյա դպրոցների խնդիրների համեմատական վերլուծություն**

Մեր հարցումների արդյունքում պարզել ենք, որ հաճախ կրթական այս հաստատություններում մեկ դասարանում աշակերտները տարբեր տարիքի և ունակությունների են լինում, ինչպես նաև տարբեր ժամկետներում են ընդունվել դպրոց, այս իսկ պատճառով հայոց լեզվի և պատմության ուսուցիչները նյութը դասավանդում են գրեթե յուրաքանչյուրին անհատական մոտեցմամբ, որը երկարաձգում է դասաժամը և ազդում ընդհանուր առաջատարների ուսուցման որակի վրա: Այս կապակցությամբ դեռ չկա մշակված միջին ընդհանուր մեխանիզմ, որը կլուծեր վերոնշյալ խնդիրը: Այս կապակցությամբ կորսվում է հետաքրքրությունը դասի նկատմամբ և մեծանում է բացակա աշակերտների թիվը դպրոցներում:

Մեկ այլ խնդիր է դասաժամերից ուշացումները, որը կրում է մեծ մասի մոտ պարբերական բնույթ: Վճարումները աշակերտների ծնողների կողմից որոշակիորեն լուծվում են այն բանից հետո, երբ բանկային փոխանցումների փոխարեն հաստատությունները վերցրնում են ծնողների հաշվեհամարներից գումարների գանձման ինքնուրույն համակարգից օգտվելու իրավունք, սակայն այն ծնողները, ովքեր չեն թույլտարում իրենց բանկային հաշվից օգտվելու, վճարումները շարունակում են կատարել անկանոն կերպով: Սա էլ իր հերթին առաջացնում է խնդիրներ դպրոցի տեղի վարձը և ուսուցիչների հոնորարները ժամանակին վճարելու հետ կապված: Այսպիսով, սահմանելով ընդհանուր խնդիրների բնույթը, հանգել ենք հետևյալ դժվարություններին, որոնց հետ առնչվում են վերոնշյալ կրթական հաստատությունները.

## **1. Կազմակերպչական բնույթի**

Այս կետի տակ հասկացվում է ավելի շուտ կառույցների ստեղծման, որոնք հիմնականում հասարակական միությունների տեսքով են հանդես գալիս Եվրոպայի հայ գաղթօջախներում, դրանց արդյունավետ կառավարման և սրանց անդամների մասնագիտական արհեստավարժության ու ձեռնարկներում կամավոր հիմունքներով գործելու ցանկությունների միջև օպտիմալ բալանսավորում գտնելու մեջ է: Իսկ թե որքան է այս բալանսավորումը հաջողվում, ցույց են տալիս շահույթ հետապնդող ընկերությունների ու հանրօգուտ կառույցների համեմատական վիճակագրությունները.

ա. Շահույթ հետապնդող ընկերություններում դիմորդն աշխատանքի է ընդունվում խստիվ մասնագիտական կարողությունների և մարդկային հատկանիշների ստուգումից ու փորձարարական շրջանում վերահսկողությունից հետո, քանզի վերջինս իր ծառայությունների դիմաց վճարվում է և պարտավոր է առնվազն վճարին համապատասխան արդյունքներ ցուցաբերել, այլապես կարող է կորցնել աշխատանքը:

Հանրագուտ կառույցում աշխատանքը կատարվում է կամավոր և անվճար սկզբունքով և շատ հաճախ հաշվի չի առնվում տվյալ նախաձեռնողի մասնագիտական որակավորումը և հնարավոր չի վերջինիցս նաև պահանջել արդյունք: Չնայած ՀՀ Սփյուռքի Նախարարության (այժմ՝ ՀՀ ԿԳՍՄ-ի) կողմից պարբերաբար կազմակերպվում են սփյուռքի ուսուցիչների համար որակավորման դասընթացներ, սակայն խորքային առումով այս հարցին լուծում չեն կարող տալ, քանզի շատ հաճախ կիրակնօրյա կամ երկօրյա դպրոցների ուսուցիչների մոտ ընդհանրապես պակասում է մանկավարժական կրթությունն ու փորձը երեխաների և պատանիների հետ: Սա այն բազմաթիվ պատճառներից մեկն է, որ այս դպրոցներ այցելողների թիվը մնում է շատ ցածր նիշի վրա՝ համեմատած տվյալ տեղանքում հայ ընտանիքների կուտակումների հետ:

բ. Շահույթ հետապնդող ընկերություններում աշխատակիցներն աշխատում են կես կամ լրիվ դրույքաչափով՝ 4 կամ 8 ժամ, շատ դեպքերում նաև հավելյալ ժամերով, որոնք փոխհատուցվում են կամ

երկարաձգված արձակուրդով կամ հավելյալ դրամական վճարումներով:

Հանրագուտ կազմակերպություններում աշխատանք տարվում է միայն ազատ ժամերին կամ շաբաթ և կամ կիրակի օրերին, համապատասխանաբար աշխատանքի քանակական և որակական արդյունքներն էլ մնում են համեստ սահմաններում:

գ. Շահույթ հետապնդող կայացած ընկերությունների մեծ մասում կան ընկերության գործառույթները կատարող հստակ մեխանիզմներ և օրվա աշխատանքի հստակ սահմանված միջանկյալ նպատակներ, որոնց ձգտում են պարբերաբար հասնել տվյալ ընկերության աշխատակիցները:

Հանրագուտ կազմակերպություններում գործում են կոնկրետ որևէ մշակութային ծրագրի շրջանակում կամ եկեղեցական և դպրոցական կրթական ոլորտում՝ հայ սերնդի ինքնության պահպանության նպատակով: Մշակութային ձեռնարկները ժամկետային են, այս ծրագրերի մասնակիցների թիվը միշտ տատանվող են, իսկ որակն էլ անհամեմատ տարբեր՝ կախված նախաձեռնող և աշխատող թիմի կոմպետենտությունից:

## **2. Բարոյա-հոգեբանական**

Աշխատանքի սովորաբար անհավասարաչափ բաշխումը հայկական համայնքների գործունեության մեջ շատ դեպքերում պատճառ է հանդիսանում թե՛ կատարողների, և թե՛ սպառողների դժգոհությունը: Մի խումբ նվիրյալներ

տքնաջան, թեկուզ սեփական նյարդերի և բարեկեցության հաշվին, աշխատում են իրագործել բազմապիսի կրթամշակութային ծրագրեր և ակտիվ մասնակցություն են բերում համայնքային կյանքին: Այլ գործընկերների հետ հարցազրույցներից և սեփական փորձից ելնելով՝ կարող ենք ասել, որ կազմակերպիչները միշտ ակնկալում են աջակցություն և նախաձեռնողական վերաբերմունք համայնքի/միության այլ անդամների կողմից, սակայն արձագանքը և պատասխանը սովորաբար ժողովներում և նիստերում շատ հայրենասիրական և ամպագորգոռ են լինում, քան իրականում այդ աջակցությունը լինում է: Սա էլ իր հերթին առաջացնում է որոշակի հիասթափություն նախաձեռնողների մոտ, իսկ ոմանց մոտ էլ, ովքեր ցանկություն և ժամանակ ունեն գործարքներում մասնակցելու, սովորաբար բացակայում է կամ լեզվական համապատասխան գիտելիքները կամ մասնագիտական փորձը, ինչն էլ նույնպես անբավարարվածության զգացում է առաջ բերում վերջիններիս մոտ: Այս բարոյա-հոգեբանական բարդույթը համայնքային ակտիվիստներից ոմանց մոտ շատ ակնառու է, իսկ շատերի մոտ էլ՝ թաքնված: Վերջնահաշվարկում սակայն վերջինս իր բացասական ազդեցությունն է թողնում ընդհանուր գործունեության վրա: Այնուամենայնիվ ընդհանրացնելով կարելի է ասել, որ հայ անհատի մոտ կա մի զգայական ներքին կապ հայի և հայեցիության, հայկական բարքերի ու մշակույթի նկատմամբ, որը նրան մղում է օտարության մեջ իր նմանին գտնելու ու իր հայկական շրջանը կազմելու:

### 3. Նյութատեխնիկական

Հայկական համայնքներում շատ հաճախ բացակայում են տարական, նյութական և տեխնիկական պայմանները. շատեր չունեն իրենց սեփական նստավայրը, այլ վարձում են տարածքներ՝ այնտեղ կիրակնօրյա դպրոցներ ու համայնքային միջոցառումներ/հավաքներ անցկացնելու համար:

Չնայած ՀՀ Սփյուռքի նախարարությունը (ներկայումս ՀՀ ԿԳՄՍ-ն) մշտապես ջանում է միություններին ապահովել գրքերով և գրականության այլ տիպի միջոցներով, այնուամենայնիվ պակասում են կոնկրետ սփյուռքի կիրակնօրյա դպրոցների համար մշակված հեշտացված դիդակտիկ դասագրքերը հայոց լեզվի, պատմության, հայրենագիտության և հայ գրականության առարկաներում:

Մուծված անդամավճարներն ու տված նվիրատվությունները մեծ մասամբ չեն բավականացնում մանկավարժական-ուսուցչական անձնակազմին վճարելու համար: Սա էլ իր հերթին ազդում է վերջիններիս ոգևորության, այպես կոչված, մոտիվացիայի վրա: Այս պայմաններում շատերը չեն համաձայնվում երկարատև համագործակցել:

Հարկավոր է նման դեպքերի համար մշակված տարբերակներ առաջարկել, որպեսզի

- ա. խնայվի դասաժամերի վրա ծախսված ժամանակը,
- բ. բարձրացվի ընդհանուր դասավանդման որակը,
- գ. չկորսվի առաջատար աշակերտների հետաքրքրությունը դասի նկատմամբ,

- դ. բարձրացվի աշակերտների հաճախումների թիվն ու նվազեցվի վերջիններիս ուշացումները,
- ե. ստեղծել կենտրոնական ռեգիստր սփյուռքի դպրոցները համակարգելու ու դրանց խնդիրներին անհատական մոտեցումներ ցույց տալու համար, որը նաև կլինի դիմելատեղի սփյուռքում հայեցի կրթություն ցանկացողների համար: Սա ամեն պարագայում պետք է համացանցվի հայագիտական կենտրոնների և եկեղեցական կառույցների հետ, քանի որ վերջիններս ունեն լավ թե վատ համակարգված գործելաոճ.
- զ. ստեղծել վերարտադրման որոշակի մեխանիզմներ (հիմնադրամներ, սփյուռքի դպրոցներին աջակցման հանրային միջոցներ), որպեսզի մշտական դրամական կարիքները հնարավոր լինի մասամբ փարատել: Այս նպատակով կազմակերպել բարեգործական համերգներ և այլ տիպի միջոցառումներ՝ դրամահավաք կազմակերպելու համար, որպեսզի հավաքվի վերոնշյալ հիմնադրամների մեկնարկային կապիտալը:
- է. ավելի կատարելագործել Հայաստանում ուսուցիչների որակավորման մեխանիզմները,
- ը. ստեղծել սփյուռքի մեկօրյա կամ երկօրյա դպրոցների աշակերտների համար գիտելիքների ստուգման մեխանիզմներ՝ քննություններ հանձնելու և վերջիններիս վկայականներ տալու ինստիտուտներ ու մեխանիզմներ, ինչպես օրինակ՝ ՀԵՄԱ հ/կ կից Բեռլինի Հայկական Դպրոցի աշակերտները

2011-ից մինչև 2015թ.թ.-ը քննություն են հանձնել Հալլե քաղաքում Մարտին Լութերի անվան Համալսարանին կից «ՄԵՍՐՈՊ» Հայագիտական կենտրոնում և վերջինիցս էլ ստացել են տարեկան ավարտական վկայականներ՝ այսպիսով ապահովելով ուսուցման կիրառական կողմը, չնայած վերոնշյալ վկայականները պետականորեն պաշտոնապես ճանաչված չեն եղել, քանզի այս գործընթացը կրել է ոչ պաշտոնական բնույթ:

- թ. Առաջարկվում է ստեղծել պաշտոնական գիտելիքների ստուգման համակարգ՝ տալով աշակերտներին իրենց գիտելիքներին համապատասխան քննական վկայագրեր, որոնք հետագայում վերջիններս կարող են պրակտիկ օգտագործել օրինակ ՀՀ ԲՈՒՀ-եր ընդունվելու ժամանակ, որպես վկայականներ, որոնք ի տարբերություն մնացած դիմորդների, որոշակի արտոնություններ կարող են այս դիմորդներին ընձեռնել, օրինակ՝ ընդունելության ընթացակարգի հեշտացման կամ դրամական վճարումների զեղչման կամ ընդհանրապես վերացման կարգ սահմանելու հարցերում: Ստեղծել օնլայն ռեժիմով համացանցային գիտելիքների ստուգման ստանդարտացված հարցաշարեր սփյուռքի մեկ կամ երկօրյա դպրոցներում սովորող աշակերտների տարբեր տարիքային խմբերի համար և քննական մեթոդով սահմանել գիտելիքների աստիճանավորում:

## **Սփյուռքում ամենօրյա արհեստավարժ դպրոցների առկայությունը և հայոց լեզվի տարածումն ու դիվերսիֆիկացումն արտերկրում՝ որպես տևական լուծում ուժացման դեմ**

Վերոնշյալ փոփոխություններով հանդերձ դրանք չեն կարող լուծել ուժացման խնդիրը, այլ միայն կդանդաղեցնեն: Այս իսկ պատճառով հայկական մեկօրյա կամ երկօրյա դպրոցների գործունեությունը կարելի է դիտարկել որպես խնդրի միջանկյալ ժամանակավոր լուծում: Ի մի բերելով վերոնշյալ վերլուծությունը՝ հանգում ենք այն եզրակացության, որ հայապահպանությունը անհրաժեշտ է տեղափոխել արհեստավարժ ամենօրյա դպրոցներ ստեղծելու հիմքերի վրա, հատկապես երբ կրթությունը, գիտությունը և մշակույթը չեն սահմանափակվում միայն իքնությանը զարկ տվող հայապահպան, իսկ մենք կարծարժենք այստեղ հայազարգացման գործոններով: Վերջիններս կարելի է դասել հումանիտար բնույթ կրող առարկաների շարքին, իսկ սրանց կողքին այսօր առավել քան տեխնիցիզմի այս դարում անհրաժեշտություն է առաջանում ունենալ տեխնիկական և բնագիտական առարկաների ամուր բազա: Այս խնդրին մենք կրկին կմոտենանք կառուցվածքաբանության տեսանկյունից, վերջիններս Համահայկական Դաշինքում ներգրավելով որոշակի իրավա-պետական կառույցային մոդելների մեջ: Տեխնիկական և բնագիտական առարկաներն այսօր ամբողջ աշխարհի երկրների կրթական ծրագրերում տեսանելի առավելություն են ստացել հումանիտար առար-

կաների նկատմամբ և թե՛ ազգի տարածքային միավորում, և թե՛ սփյուռքում դրանց դասավանդումը և ուսուցումը ստացել է գերակա բնույթ: Այն գիտա-կրթական միջազգային փորձի փոխանակման շնորհիվ զարգանում է կրթական օջախներում տեսական ուսուցմամբ ամենուր գրեթե համահավասար մակարդակի վրա, իսկ պրակտիկ գործառույթում՝ այն բնականաբար ավելի առաջընթացային է արդյունաբերող զարգացած երկրներում, որոնք էլ իրենց հերթին ստեղծում են նախադրյալներ նոր տեսությունների զարգացման համար: Այս իսկ պատճառով շատ դեպքերում ավելի թույլ տնտեսություն ունեցող պետությունները հանդիսանում են գիտական մտքի մատակարար ավելի ուժեղ տնտեսություն ունեցող համակարգերին: Այդ թվին են պատկանում նաև Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունները: Սա մի կողմից համալրում է սփյուռքի գաղթօջախները նոր հայ անդամներով և այսպիսով որոշակի չափով ակտիվացնում է հայեցի գործը ու հայապահպանությունը սփյուռքում, սակայն մյուս կողմից էլ ջլատում և քայքայում է ազգի տարածքային միավորի ամբողջ պետական և հասարակական համակարգը՝ այն դարձնելով վերոնշյալ ներգաղթյալների կողմից կատարված դրամական տրանսֆերներով գոյատևող երկրներ: Այսպիսով առաջանում է հարց, արդյո՞ք հայրենադարձության ծրագրերը պետք է առաջնային տեղ ունենան «Հայկական Դաշինք» կառույցում, թե՛ անհրաժեշտ է սփյուռքում համալիր լուծում տալ հայազարգացմանը: Նշենք, որ նման հայրենադարձության ծրագրեր արդեն իրականացվում են ՀՀ կառավարության հովանավորությամբ Repat Armenia հիմնադրամի և Սփյուռքի գործե-


րի հանձնակատարի գրասենյակի կողմից «Ներուժ» ծրագրով, սակայն վերջիններիս գրանցած արդյունքներն առավել քան անմխիթար են: 2012թ.-ից մինչև 2018թ.-ի դեկտեմբեր ամիսներին մոտ 48 հայրենադարձներ:

Խնդիրն այստեղ վերջիններիս կատարած վատ կամ լավ աշխատանքի մեջ չի կայանում, այլ նման խնդրի լուծման համար հասարակական դինամիկ նախադրյալների բացակայությունն է, օրինակ՝ ազգի տարածքային միավորում զարգացած տնտեսության առկայությունը, կայուն իրավական պետականություն ունենալը, քաղաքացիական հասարակության գերակայության առկայությունը պետությունում, առավել ժողովրդավարական մեխանիզմների գործարկում սոցիալական և ընտրական ոլորտներում և այլն:

Այս խնդրի ավելի խորքային լուծման տարբերակ կարող է հանդիսանալ հայերեն լեզվի և դրանից ածանցվող հայ մշակույթի դիվերսիֆիկացումն արտասահմանում, ինչպես օրինակ կարելի է վերցնել գերմաներենի տարածմանն ուղղված Գյոթե ինստիտուտի աշխատանքները: Այս նպատակով Համահայկական Դաշինքի հայազարգացման գերակա նպատակը պետք է հանդիսանա անհատական հայկական դպրոցների ցանցի ստեղծումն ամբողջ սփյուռքում՝ հաշվի առնելով ավելի խիտ բնակեցված հայակենտրոն վայրերը և ընտրելով այս հարցում արդեն հաջողություններ գրանցած սփյուռքում հայկական ամենօրյա դպրոցների մոդելները: Միևնույն ժամանակ պետք է աշխատել մայր համակարգերի դպրոցների մեջ հայերենը ներառել որպես օտար լեզու:

Վերոշարադրյալ դրույթների կատարումը իրականում բարդ և երկարատև աշխատանք է պահանջում, որը միայն հնարավոր է լուծել աշխարհասփյուռ հայ նվիրյալների և Հայաստանի ու Արցախի ազգաբնակչության, կառավարությունների, հաստատությունների ու քաղաքական կուսակցությունների համատեղ կուռ ջանքերով:

# Կրթամշակութային և հոգևոր հորիզոնական կառույց, վարչական կառույցի տեղակայման վայրը՝ արևմտաեվրոպական երկրներ



# Կրթամշակութային և հոգևոր ուղղահայաց կառույց, վարչական կառույցի տեղակայման վայրը՝ արևմտաեվրոպական երկրներ



## ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

1. Աշխարհասփյուռ հայության միասնությունը երազանք չի, այլ առավել քան իրատեսական քայլերի համադրում է:
2. Համադրումը կատարվում է համակարգային ենթակառուցների մոդելավորմամբ և վերջիններիս մեծությունների միջև փոխհարաբերությունների և հաղորդակցման սահմանումով:
3. Այն ամբողջականացնում է կառույցային այս բարդ համակարգը քաղաքականության, տնտեսության և կրթամշակութային ու հոգևոր ոլորտներում:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Niklas Luhmann, Einführung in die Systemtheorie, Hrsg. v. Dirk Baecker, Einband
2. Niklas Luhmann, Politische Soziologie Herausgeber: Kieserling, André, Einband
3. Niklas Luhmann, Die Politik der Gesellschaft, Hrsg. v. Andre Kieserling, Einband
4. Niccolò Machiavelli Mensch und Staat, Übersetzung: Ziegler, Johannes, Einband, Tradition
5. Mihran Dabag und Kristin Platt, Identität in der Fremde, (Broschiert - 1993)
6. Ruth Mayer, Diaspora: Eine kritische Begriffsbestimmung, (Taschenbuch - Oktober 2005)
7. Tessa Hofmann, Annäherung an Armenien, (Taschenbuch - 1997)
8. «Ազգ» օրաթերթ, 30/09/2004թ., «Հանդիպում Մոսկվի հոգեւոր հովիվ Տեր Գարեգին քահանայի հետ»
9. Azat Ordukhanyan, Armenier in Deutschland, Geschichte und Gegenwart, Vortrag am 19. April 2008 in Erfurt
10. Paul Anthony Samuelson, William D., Nordhaus: Volkswirtschaftslehre. Das internationale Standardwerk der Makro- und Mikroökonomie. 2. Auflage. mi-Fachverlag, 2005, ISBN 978-3-636-03033-7 S. 21.

11. Sonnenschein, H., Do Walras', identity and continuity characterize the class of community excess demand functions?. In: Journal of Economic Theory. 6, 1973, S. 345–354.
12. Ulrich Basseler, Jürgen Heinrich, Burkhard Utecht: Grundlagen und Probleme der Volkswirtschaft. 18. Auflage. Schäffer Poeschel, Stuttgart 2006, S. 298.
13. H.W. Wohltmann, Grundzüge der makroökonomischen Theorie. Totalanalyse geschlossener und offener Volkswirtschaften. 3., überarbeitete und erweiterte Auflage, München 2000, 528 S. (Makroökonomisches Lehrbuch für das Grund- und Hauptstudium)
14. [https://www.berliner-missionswerk.de/fileadmin/documents/Publikationen/Armenien\\_-\\_Weihnachten\\_nahe\\_am\\_Paradies\\_\\_5\\_.pdf](https://www.berliner-missionswerk.de/fileadmin/documents/Publikationen/Armenien_-_Weihnachten_nahe_am_Paradies__5_.pdf)  
„... und hat uns besucht der Aufgang aus der Höhe“ Weihnachten nahe am Paradies Perspektiven armenischer Sakralarchitektur von Andreas Goetze (Dez. 2013)
15. <http://repatarmenia.org/>

**Միքայել Մինասյանը** ծնվել է 29.02.1972թ. ՀՀ, Շիրակի մարզի Արթիկ քաղաքում:

1979 թ. հաճախել է Արթիկի համար 1 միջն. դպրոցը: 1988 թ. Երկրաշարժի պատճառով վերոհիշյալ դպրոցի ամբողջ աշակերտական և ուսուցչական անձնակազմը տեղափոխվել է Լատվիայի Ցեսիս քաղաք, ուր ավարտել է Արթիկի համար 1 միջնակարգ դպրոցը: 1990թ. ընդունվել է ԵՊՀ-ի ռոմանա-գերմանական ֆակուլտետի գերմաներեն լեզվի և գրականության ամբիոն:

1994թ. տեղափոխվել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բավարական երկրամասի Բամբերգ քաղաքի Օտտո-Ֆրիդրիխի անվան Համալսարան և ընդունվել լրագրություն ուղղորդվածությամբ գերմանագիտության ուսուցման բաժին: Երկրորդ մասնագիտությունը ընտրել է հոգեբանությունը:

2000թ. վերոհիշյալ համալսարանում 1,8 (լավ) գնահատականով ավարտել է դիպլոմային ուսուցումը՝ դիպլոմ գերմանագետ լրագրողի որակավորմամբ: Ընդունվել է ԳԴՀ Բամբերգ քաղաքի Օտտո-Ֆրիդրիխի անվան համալսարանի Գերմանական Նորագույն Գրականության ամբիոնում գերմանագիտության ուսուցման ասպիրանտուրայի բաժինը՝ ավարտելով 2004 թ.:

Ներկայումս աշխատում է Բեռլինի դատարաններին և նոտարներին կից հայերեն-ռուսերեն-գերմաներեն լեզուների երդմնակալված բանավոր և լիազորված գրավոր թարգմանիչ:

Մի շարք գիտական հոդվածների, գրական թարգմանությունների և գրքերի հեղինակ:

## Գործունեությունը

1993թ. մասնակցել է ԳԴՀ-ի Բամբերգ քաղաքի Օտտո-Ֆրիդրիխի անվան համալսարանում կազմակերպված 15-րդ Միջազգային ամառային կուրսերին:

1999թ. գերմանական Էդլանգեն քաղաքում գտնվող Siemens Medical Solutions բաժնետիրական ընկերության Corporate Communication բաժնում զբաղվել է բժշկական տեխնիկաների գովազդային և ձեռնարկության ներքին հաղորդակցման գործունեությամբ: 1992-1994 թ. ԵՊՀ-ում ուսուցմանը զուգահեռ աշխատել է «Արմենպրես» պետական լրատվական գործակալությունում՝ որպես գերմաներեն-հայերեն-ռուսերեն լեզուների թարգմանիչ և ազատ լրագրող:

1994-2004թ. անհատ ձեռներեցի կարգավիճակով Գերմանիայում ուսուցմանը զուգահեռ զբաղվել է հայերեն, ռուսերեն ու գերմաներեն լեզուներով գրավոր և բանավոր թարգմանչի գործունեությամբ:

23.10.2003թ. ԳԴՀ-ի Թյուրինգիայի երկրամասի Էրֆուրտ քաղաքի երկրամասային դատարանի նախագահի մոտ երդմնակալությունից հետո ստացել է գերմաներեն-հայերենի և հայերեն-գերմաներենի գրավոր ու բանավոր երդվյալ թարգմանչի կոչումն ու արտոնագիրը: 03.2004թ. բացել է WORLD LANGUAGE CENTER թարգմանչական գրասենյակը:

20.05.2005թ. վերադարձել է ՀՀ:

22.04.06-30.10.07թ. Երևանում աշխատել է ՀՀ-ում Ֆոլկսվագեն ԲԸ ներկայացուցչությունում՝ «Եվրովագեն» ՍՊԸ-ում, որպես մարքեթինգի բաժնի ղեկավար, ապա առաջին փոխտնօրեն:

09.01.08-29.09.08թ. տեղափոխվել է Բեռլին և ընդունվել „EURACOM GmbH“ (Եվրակոմ ՍՊԸ) հատուկ նշանակության մեքենաների վաճառքի մենեջերի կարգավիճակ: Գործունեության շուկաներն են եղել. Ղասախստանը, Բուլղարիան, Թուրքմենստանը, Ղրղզստանը և Ռուսաստանի Դաշնությունը:

30.09.2008թ. Բեռլինի երկրամասային դատարանի կողմից արտոնագրվել է որպես նույն երկրամասի դատարանների և նոտարների համար գերմաներեն-ռուսերեն-հայերեն լեզուների բանավոր և գրավոր երդվյալ թարգմանիչ և ցայսօր աշխատում է մասնագիտությամբ՝ անհատ ձեռներեցի կարգավիճակով:

### **Հանրային գործունեություն**

1999-2000թ. կազմակերպել է Հայ անվանի գեղանկարիչ Հրանտ Թադևոսյանի(Թաթոսի) նկարների ցուցահանդեսների շարքը և կոնցեպտավորել գերմանական Մյունխեն, Բամբերգ, Քոբուրգ և Էռլանգեն քաղաքներում:

09.09.2010թ. հիմնադրել է Բեռլինի Հայկական Դպրոցը՝ Գերմանիայում ՀՀ դեսպան Արմեն Մարտիրոսյանի ներկայությամբ հանդիսավոր բացումով: Հայոց լեզու և գրականություն ու երգեցողություն առարկաների ներածում և դպրոցի տնօրենի պարտականությունների կատարում:

18.10.12թ-ից «Հայ և Եվրոպացի Մասնագետների Ասոցիացիա» - ՀԵՄԱ հ/կ (Association of the European and Armenian Experts e.V. - AEAE), [www.aeae.eu](http://www.aeae.eu), հիմնադիր անդամ է և ընտրվել է Վարչության Առաջին Նախագահի պաշտոնում: ՀԵՄԱ հ/կ կողմից ընդունված նախագծերի և գործող ծրագրերի թվին են պատկանում ցայսօր.

1. Բեռլինի Հայկական Դպրոցի ստանձնումը ՀԵՄԱ հ/կ վարչության կողմից՝ հայոց պատմություն և պարի ուսուցում առարկաների թվի ընդլայնմամբ: Համագործակցությունը Հալե/Վիթենբերգ համալսարանի հայագիտական ուսումնասիրման կենտրոնի հետ տարեկան ավարտական քննություններ կազմակերպելու նպատակով:

2. Բեռլինի Լիխտենբերգ շրջանում ավետարանական Պաուլ Գերհարդի համայնքի աջակցությամբ Հայ Առաքելական Եկեղեցու Սբ. Պատարագների ամենամյա կազմակերպում «Ամենափրկչի» եկեղեցում: Համագործակցությունը Գերմանիայի Հայ Առաքելական Եկեղեցու Թեմի առաջնորդարանի հետ:

3. Բեռլինում 2015թ. -ին Հայոց Ցեղասպանության 100ամյակի կապակցությամբ Գերմանա-Հայկական Մշակույթային Օրերի հանդիսավոր բացումը Գերմանական Բունդեսթագի պատգամավոր պրոֆ. դր. Մարտին Պետցոլդի և Բեռլինի Լիխտենբերգ շրջանի պետ. ծառայության մշակույթի հանձնակատար Կերստին Բոյերիխի բարձր հովանավորությամբ, ֆինանսական աջակցությունը՝ Գերմանիայի Արտաքին Գերատեսչության (Deutsches Auswärtiges Amt) կողմից: Մշակույթային օրերի բազմաթիվ միջոցառումների, այդ թվում գեղարվեստի ցուցահանդեսի, դասական համերգների, գիտական դասախոսությունների և երեխաների ու պատանիների կրթա-դաստիարակչական ծրագրերի անցկացում և ամենամյա կրկնություն մայիս-հունիս ամիսներին:

4. Բազմաթիվ մշակույթային, գիտական, կրթա- դաստիարակչական և բարեգործական նախաձեռնությունների կազմակերպում և անցկացում մինչև օրս:

5. 44-օրյա պատերազմի ընթացքում կազմակերպել և մասնակցել է մի քանի բազմամարդ հավաքների, փողոցային երթերի՝ ի պաշտպանություն Արցախի ինքնորոշման իրավունքի և արցախահայերի ազատության:

6. 44-օրյա պատերազմի ընթացքում և հետպատերազմյան շրջանում, համագործակցելով մի շարք հայկական համայնքների, Գերմանիայում Հայ Առաքելական Եկեղեցու Առաջնորդարանի և Գերմանահայ Կենտրոնական Խորհրդի հետ, համակարգել, հավաքագրել, դեպի Հայաստան և Արցախ է առաքվել մոտ 100տ մարդասիրական բեռներ, որոնց բաշխումը տեղում նույնպես կոորդինացրել է ՀԵՄԱ հ/կ-ը:

7. 2021թ.-ի հոկտեմբերի 1-ից մինչև 2022թ.-ի հոկտեմբերի 31-ը կազմակերպել և հաջողությամբ ավարտին է հասցրել «Վիրավոր և հաշմանդամ զինվորների և կամավորականների համար տոտ դասընթացներ ծրագիրը», որի արդյունքում 14 ուսանողներ կարողացել են տեղավորվել բարձր աշխատավարձով աշխատանքի:

## **Պարգևատրություններ և կրթաթոշակներ**

03-12.2002թ. ԳԴՀ-ի Բամբերգ քաղաքի Օտտո-Ֆրիդրիխ անվան համալսարանի հիմնադրամից ասպիրանտական ուսուցման կապակցությամբ ստացել է թոշակ:

20.06.2002թ. գերմանական Յ.Վ. Գյոթեյի անվան ինստիտուտին կից Բոննում գտնվող INTERNATIONES կազմակերպության հովանավորությամբ թարգմանել և հրատարակել է Յ.Վ. Գյոթեյի «Ընտրովի ազգակցություններ» բնագիտական և խոհափիլիսոփայական վեպը և գիտական ներածությամբ հիմնավորել հայերեն թարգմանությունը:

11.11.2002թ. Գերմանական Ակադեմիական Փոխանակման Ծառայության (DAAD) կողմից ակնառու առաջադիմության համար ճանաչվել է որպես տարվա լավագույն արտասահմանցի ուսանող:

01-12.2003թ. HEM-հիմնադրամը հովանավորել է «Մենտալ կողմնորոշում դեպի արևմուտք: Հայ քնարերգությունը և գերմանական մոդեռնը. Ռ.Մ. Ռիլկեյի, Եղ.Չարենցի և Պ.Սևակի պոեզիաների համեմատականը հավատի և հայրենիքի ըմբռնման հարթություններում» դիսերտացիայի թեման:

21.08.2011թ. ՀՀ Սփյուռքի նախարարության կողմից ստացել է Վիլյամ Սարոյանի անվան պետական շքանշան:

2021թ.-ից ստացել է բազմաթիվ պատվոգրեր, շքանշաններ և շնորհակալագրեր ՀՀ ՊՆ, Արցախի Կառավարության և ՀՀ Սփյուռքի գործերի հանձնակատարի գրասենյակից՝ Հայրենիքին ցուցաբերած օգնության և նվիրվածության համար:

### **Հրատարակությունները թերթերում և պարբերականներում**

1993թ. «Դասականը և ռոմանտիկան» ամսառային կուրսերում. Հայ ուսանողի տպավորությունները: Համալսարանական թերթ DIALOG 5, ք. Բամբերգ:

1996թ. հիմնադրել է գերմանա-հայկական շաբաթաթերթ ԱՆԱՆՈՒՆ-ը, ք. Բամբերգ, ապրիլ-հունիս ամիսներին:

06.2003թ. մտածելակերպը և լիրիկական «եսը»: Կրոնի և հայրենիքի ըմբռնումը Ռ.Մ. Ռիլկեյի և Պ. Սևակի ստեղծագործություններում, uni.vers պարբերական, Բամբերգ 04 հունիսի 2003թ.

### **Հրատարակված գրքեր**

2000թ. «Հեշտացված հայերեն գերմանալեզու սովորողների համար» մեթոդական դասագիրք, ք. Բամբերգ, ISBN: 3-00-006413-3

2002թ. Յ.Վ. Գյոթեյի «Ընրովի ազգակցություններ» բնագիտական և խոհափիլիսոփայական վեպի թարգմանությունը հայերենի և լույս ընծայումը, ՆՈՐ-ԴԱՐ հրատարակչություն, Երևան, ISBN: 99930-64-73-4

2009թ. Պ. Սևակ «Եղիցի լույս» բանաստեղծությունների շարքի հայերենից գերմաներեն լեզվի թարգմանությունը և հրատարակումը, Երևան, ՏԻԳՐԱՆ ՄԵԾ հրատարակչություն, ISBN: 978-3-00-028273-7

2015թ. Հրահատ Սարգսյան. «Երազներիս արձագանքը» չափածո և արձակ ստեղծագործությունների ժողովածուի թարգմանությունը հայերենից գերմաներենի: Hay Media հրատարակչություն, ISBN: 978-3-86320-030-5



Հեղինակ՝  
Միքայել Մինասյան

**Սույն գիրական աշխատությունը հանդիսանում է  
Սփյուռք-Հայաստան-Արցախ կապերի հանրայնագիրության և  
հաղորդակցման գիրության տեսանկյուններից վերլուծության  
մի տեսություն: Այն առաջարկում է աշխարհասփյուռ հայության  
միասնության և փոխհամագործակցության կառույցային  
տարբերակներ քաղաքականության, տնտեսության և  
կրթամշակութային ոլորտներում:**

ISBN 978-9939-0-4571-9



9 789939 045719